

ՏԱԲԼԱԶԻ ԽԱՉԱՆԻ ԳՐԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ

Անցյալ դարի 50-60-ական թվականներից սկսած հայ հանրային միտքը գործունե եետաքրթրություն է ցուցաբերում ժողովրդի հոգևոր և նյութական մշակույթի նկատմամբ, մոր թափ են առնում ժողովրդական րանահյուսության մնուչների ինչպես հայտնաբերման ու գրառման, այնպես էլ հրատարակման և ուսումնասիրման աշխատանքները: Երիտասարդ րանահավաք-հրատարակիչ Տիգրան Նավասարդյանը այդ մտահոգությամբ XIX դարի 80-90-ական թվականներին հայկական մամուլում հանդես է գալիս հատուկ կոչ-դիմումով՝ ուղղված հայ հասարակայնությանը<sup>1</sup>:

Տ. Նավասարդյանին արձագանքում են շատերը, այդ թվում նաև Ալեքսիսի բանահյուսության հավաքման ու հրատարակման գործի նախանձախնդիր Մակար Բարխուդարյանը<sup>2</sup>, ում խորհրդով Տմբլաչի հաչանը, պատմագագարական շրջանում աշխուժություն առաջացնելու և բանահյուսության հավաքման գործին նպաստելու նպատակով ժողովրդական կենդանի բառուբանով համեմվրս՝ իր մանրապատումներով հաճախակի է հանդես գալիս ժամանակի հայկական մամուլում: Տիգրան Նագարյանի ջանքերով 1882թ. Շուշիում հրատարակվում է Կ.Կ. Մելիք-Շահնագարյանի՝ Ղարաբաղի բարրառով գրված «Ղըլըցե կնանոց պընը-վեշակը» գրքույկը, որին կցած «Ազդում» խմբագիր-հրատարակիչ Տ. Նագարյանը ծանուցում է, որ եթե ներկա գրքույկը ցանկալի ընդունելություն գտնի ընթերցողների կողմից՝ հրատարակչությունը լույս կընծայի նաև հեղինակի

մյուս աշխատությունները, որոնց մեջ կերևան Ղարաբաղի կանանց ոչ միայն թերությունները, այլև վսեմ ու պայծառ կողմերը<sup>3</sup>: Շուտով պարզ է դառնում, որ անտեղի է հրատարակչի անհանգստությունը. գրքույկը այնպիսի ջերմ ընդունելության է արժանանում, որ նույն թվականին վերահրատարակվում է թիֆլիսում: Իսկ «Ուսումնասիրություններ հայկական բարբառախոսության» աշխատության մեջ<sup>4</sup> ականավոր գիտնական Յր. Աճառյանը Ղարաբաղի բարրառով գրված աշխատությունների շարքում կարևորում է Տմբլաչի հաչանի «Ղըլըցե կնանոց պընը-վեշակը» և «Շուշուա դալին խերն ու շառը» (Թիֆլիս, 1887):

Ուշագրավ է Տմբլաչի հաչանին ուղղված՝ Մ. Բարխուդարյանի 1886-ի նոյեմբերի 2-ի թվակիր նամակո հետևյալ տողերը. «Տմբլաչի հաչանը» պատճառում է քաղաքումս հուզմունք, գվարճարանություն, խթան, գայրույթ և քսփսոց: Ապրեք դուք»<sup>5</sup>:

Ուսումնառության նպատակով մեկնելով արտասահման՝ Կ. Մելիք-Շահնագարյանը Մոնպելիեից, Ժնևից, Բոննից, Շվեյցարիայից «Նոր-Ղարի» իմրագիր-հրատարակիչ Սպանդար Սպանդարյանին է ուղարկում իր երգիծական մանրապատումները: Խմրագրի և թղթակցի միջև ծավալված ստեղծագործական համագործակցությունը տևում է մինչև դարասկիզբը, որի ընթացքում Տմբլաչի հաչանը ոչ միայն «բարրավակիրներով» գբաղեցնում է «Նոր-Ղարի» բա-

<sup>1</sup> «Մշակ», 1882, №№ 4, 222, 1883, № 79, 1884, № 10, 1890, № 109:

<sup>2</sup> ԳԱԹ, Կ.Կ. Մելիք-Շահնագարյանի ֆ., գ. 116:

<sup>3</sup> Մելիք-Շահնագարյան Կ.Կ., Ղըլըցե կնանոց պընը-վեշակը, Շուշի, 1882, էջ 4:

<sup>4</sup> Աճառյան Յր., Ուսումնասիրություններ ուսուցչական բարբառախոսության (Գ. Բնություն Ղարաբաղի բարբառին), Վաղարշապատ, 1899, էջ ա, բ:

<sup>5</sup> ԳԱԹ, Կ.Կ. Մելիք-Շահնագարյանի ֆ., գ. 116:

նասիրականները, այլև ձեռնամուխ է լինում օրաթերթում «Տնագլխազ» և «Զուռնա» երգիծաթերթերի հրատարակմանը: Որ նրա մասնակցությունը խրատ անհրաժեշտ էր «Նոր-Դարին», վկայում է 1887թ. վարդապետ Թեոֆիլ «Քրոնիկոնը», որից տեղեկանում ենք, որ հանրահռչակ Տմբլաչի հաջանը այնքան է գրավել, հուզել և ծիծաղեցրել մեր ժողովրդին, մանավանդ Ղարաբաղի հայությանը, որ այժմ էլ «Նոր-Դարի» համարը ստանալուն պես ընթերցողը բանասիրականի բաժնում Տմբլաչի հաջանին է որոնում: Պարզվում է, որ քաղաքում ձեռքից ձեռք է անցնում Տմբլաչի հաջանի լուսանկարը՝ տմբլան ձեռքին, իսկ տմբլայի վրա հետևյալ տողերը «Հինչը՞ք ասըմ, տմբլիս թխիմ, թա չէ...»<sup>6</sup>: Այդ պատկերը տեսնողը ծիծաղից թուլանում է և չի կարողանում իրեն զսպել: «Լուսանկարի մեջ, - կարդում ենք «Քրոնիկոնում», - իսկական Տմբլաչի հաջանը ներկայանում է մեզ մթել փափախը գլխին, չմռչկները ոտներին, բյուզմավոր չուխեն հագին, լիփավար շալվարի ծայրերը դուրսերում պնդացրած, զուտկը կապած, տմբլան ձեռքին բռնած, մի ձեռքը բարձրացրած, հենց ուզում է տմբլին խփի... Օրերումս էլ համակրողների մի խումբ 10 ռուբլի փող հավաքեցին և ուղարկեցին պոստով Տմբլաչի հաջանին և խնդրեցին, որ իրենց կենացը կոնծե ու քանի կենդանի է, տմբլին խփի ու խփի... Ինչ կը լիներ, որ մեզ մոտ գար «Նոր-Դարի» Տմբլաչի հաջանը և սթափեցներ մեր քաղաքը յուր բարոյական և տնտեսական քնից: Ի սրտե համակրում ենք Տմբլաչի հաջանի ուղղությունը և ցանկանում հարատևություն»<sup>7</sup>:

4. Մելիք-Շահնազարյանին ճանաչում է բերում 1900-1901 թթ. Բաքվում լույս տեսած երգիծական ֆելիետոնների «Զուռնա-Տմբլա» երեք գրքից բաղկացած ժողովածուն, որը լրացվում և վերահրատարակվում է 1907-1908թթ. Վա-

ղարչապատում (այժմ Էջմիածին)՝ գիրք ԼԼ (234 էջ) և գիրք Բ (268 էջ)<sup>8</sup>:

Հեղինակը Ա գոթի «Երկու խոսքում» իր երգիծական ստեղծագործությունները ժանրային առումով համարում է ֆելիետոն՝ հաշվի առնելով դրանց թեմատիկ և կառուցվածքային առանձնահատկությունները, պատկերվող դեպքերի և դեմքերի իրական գծերի պահպանումը, կյանքի որևէ արատավոր փաստի կամ հասարակական տեսակետից վնասակար երևույթի քննադատությունը. «Հրատարակության տալով Ղարաբաղի լեզվով մեր գրած ֆելիետոնները, մենք նպատակ ենք ունեցել ի մի ժողովուրդ այդ հատ ու կտոր հողվածները, որոնք լույս են տեսել այս ու այն թերթում (գլխավորապես «Նոր-Դարում»), որպեսզի թեթևացրած լինենք Ղարաբաղի լեզվով հետաքրքրվող բանասերների գործը և միևնույն ժամանակ երևան հանած մեր ընտանեկան միստ ու կացի և հասարակական գործերի և զոռոհչների աչքի ընկնող պակասությունները»:

Ֆելիետոնը ակնարկային գրականության տեսակ է, գեղարվեստա-հրապարակախոսական ժանր, որին հատուկ է քննադատական, հաճախ կատակերգական, երգիծական բնույթը: Ընդհանուր հատկանիշներն են՝ նյութի այժմեականությունը, շարժունակությունը, առերևույթ անկանխատեսելիությունը, թեթևությունը, կոմպոզիցիայի ազատ կերպը, գեղարվեստական և ոչ-գեղարվեստական ժանրերի և ոճերի պարողիական կիրառումը: Ֆելիետոնը կապված է թերթի ամենօրյա աշխատանքի հետ և կարող է շոշափել բազմազան խնդիրներ՝ կենցաղային արատներից մինչև միջազգային կյանքի հարցերը:

Ժանրի ծնունդը համարվում է 1800թ. հունվարի 28-ը, երբ փարիզյան «ժուռնալ դը դեբա» թերթի մեջ դրվել է հավելյալ թերթիկ (feuilleton), որտեղ սկսել են տպագրվել հայտարարություններ, թատերական և երաժշտական գրախոսու-

<sup>6</sup> «Նոր-Դար», 1887, № 96:

<sup>7</sup> Անդ:

<sup>8</sup> *Տմբլաչի հաջան (Մելիք-Շահնազարյան Կ.Կ.)*, Զուռնա-Տմբլա, Վաղարշապատ, գ.Ա, 1907, գ.Բ, 1908: Մեջբերումներն ըստ այս հրատարակությունների:

թյուններ, նորածնությանը վերաբերող հաղորդումներ, հանելուկներ, այսինքն՝ ոչ քաղաքական և ոչ էլ պաշտոնական նյութեր: Այն երբեմն գրվել է չափածո՝ իրրև սյուժետային ռանաստեղծություն: Ֆելիետոն խորագրի տակ տպագրվել են նույնիսկ վեպեր (է. Սյուի «Փարիզի գաղտնիքները», Ա. Դյումայի «Երեք հրացանակիրները»): դրանով սկզբնավորվել է «վեպ-ֆելիետոնը»: Ի սկզբանե ֆելիետոն ըստ պարզապես խորագրի անվանում էր և ժամրի իմաստ չէր պարունակում իր մեջ: Հասարակական կյանքի և լրատվության միջոցների պատմական զարգացման ընթացքում, ձգտելով առավել ամրոջությամբ արտացոլել կյանքի նոր երևույթները՝ ֆելիետոն խորագիրը աստիճանաբար ժամրի իմաստ է ձեռք բերում:

Նախապես ֆելիետոնի ժամրը սոցիալ-քաղաքական ուղղվածություն չի ունեցել և վերոհիշյալ մոտիվներով հարստացել է միայն ֆրանսիական մեծ հեղափոխության շրջանում (Կ. Դեմուլենի, Լուստալոյի, Ժ. Մարատի պամֆլետները): Արևմուտքում այդ ժամրի քաղաքականացումը կապվում է Լ. Բյոնեի, Հ. Հայնեի, Վ.Ս. Ռոշֆորի հետ: 20-30-ական թվականների ֆելիետոնը զարգացրել է ռուս առաջավոր ֆելիետոնային զրականության ավանդույթները (Յու. Օլեշա, Մ. Բուլգակով, Մ. Ջոշչենկո, Ի. Իլֆ և Ե. Պետրով և այլք), իսկ միջազգային քաղաքական թեմաներով (Վ. Սայակովսկի, Դ. Ջասլավսկի, Յա. Գալան): Հայ գրողներից ֆելիետոններ են գրել Հ. Պարոնյանը, Ե. Օտյանը, Դ. Դեմիրճյանը, Լեո Կամսարը, Ա. Վահուհին և ուրիշներ: Չափածո ֆելիետոններ է գրել նաև Հ. Թումանյանը<sup>9</sup>:

Լեոյի կարծիքով «ֆելիետոնը մեր հրապարակախոսության սկզբից եղել է այն զրական ձևը, որ սիրել են մեր գրողները և որ առանձնապես սիրելի է դարձել հայ ընթերցողի համար: Թեթև, վառվռուն ոճը, համեմատ ժողրի հետ, ահա՛ այն միջոցը, որով ավելի հեշտ ու ազդու է եղել մեր ընթերցողի, մեր պակասու-

թյունների մերկացումը: Ծանր, լուրջ հրապարակախոսությունը ամրոջապես եվրոպական հողի պտուղ էր և մեզ համար խորթ մի ըան էր, օտար երկրից բերած մի պատվաստ. մենք դեռ պիտի սովորեինք նրան: Մինչդեռ ֆելիետոնական ձևը մեզ համար այնքան խորթ լինել չէր կարող, որևէ սրամիտ պատմություն, առակի ձևով պակասություններ ծաղրելը մեզ էլ հայտնի էր հին ժամանակներից, և մեր ժողովուրդը ամենամեծ հաճությամբ է պատմում ծաղրածուների արարքները, կրկնում նրանց ասածները: Ֆելիետոնը, որի գլխավոր տարրը նույն ծաղրն է, ամենից մատչելի, ժողովրդական ձևն էր մեզանում և նա սկզբից ևեթ մեծ հաջողություն ունեցավ»<sup>10</sup>:

80-90-ական թվականներին «Նոր-Դարի» էջերում լույս տեսած Տմրլաչի խաչանի ֆելիետոնները պատկանում են այդ ժամրի սոցիալական և քաղաքական մոտիվներով հագեցած տեսակին: Որպես փոքր ծավալի երկ՝ ֆելիետոնի կառուցվածքն ըստ էության, պարզ է, դյուրըմբռնելի, որովհետև ռացակայում է ստեղծագործության ընդհանուր մասերի խիստ պատճառարանվածությունը: Նրա գործերում, իհարկե, հնարավոր չէ որոնել սյուժեի ընդհանուր հաջողական օղակները, որովհետև ֆելիետոնում դրանցից շատերը կարող են ռացակայել. կարևորը ընդհանուրությունների զարգացումն է, հերոսների հարաբերությունների նկարագիրը: Տմրլաչի խաչանի ֆելիետոնները ընդգրկմամբ և ծավալով, ընկալանարար փոքր են, հերոսների թիվը սահմանափակ է, կերպարի էությունը ռացահայտվում է սովորարար մեկ կամ երկու իրադրության կամ դրվագի միջոցով: Դրվատելով դրականի անմիջական կերպարային կրողներին՝ ռացասականի սպանիչ ծաղրով երգիծարանը արտահայտում է իր նվիրվածությունը հակադիր սկզբունքներին: Նա հանդես է գալիս իրրև դեպքերի ակնատես, մասնակից կամ հերոսի խոսակից, նկարագրում իր ապրումները, քանի որ հեղինակի ակտիվ միջամտությունը ընդհանուր է ֆելիետոնի ժամրին: Տմրլաչի խաչանի անունը ծառայեցնելով որպես հնարանք, հեղինակը իր

<sup>9</sup> Краткая литературная энциклопедия, т. 7, Москва, 1972, с. 930-931, Հայկական սովետական հանրագիտարան, հ. 12, Երևան, 1986, էջ 624-625, *Ջրաշյան է.*, Գրականության տեսություն, Երևան, 1980, էջ 360:

<sup>10</sup> *Լեո*, Երկերի ժողովածու, հ. 6, Երևան, 1987, էջ 471:

ստեղծագործական մտահղացման համաձայն. միանգամայն ինքնուրույն ֆելիետոնները ներքուստ կապակցում է իրար լեզուն հարմարեցնելով իր քաղաքական, սոցիալ-հոգեբանական ոգորումներին: Փաստորեն Տմբլաչի խաչանը պատմողի կերպարն է, և ամեն ինչ երգիծվում կամ արժեքավորվում է նրա տեսանկյանից: Երգիծական մանրապատումների, ֆելիետոնների կառուցվածքը ենթարկվում է այդ պահանջին: Հենց այս մեկնակետից պետք է կարևորել մարդկային առօրեական թվացող կապերն ու բախումները բարոյական մեծ հիմնախնդիրների ելակետից դիտելու հեղինակի համարձակությունը:

Գրականագետները «Էն դյունին ահվալաթան» («Ձուռնա-Տմբլաչ» - 1895թ.) ֆելիետոնը ժանրային առումով բնութագրում են իբրև երգիծական վեպիկ<sup>11</sup>: Այն բաղկացած է երեք մասից՝ «Ձուռնա-Տմբլաչ»-1893թ., «Ձուռնա-Տմբլաչ» - 1894թ., «Ձուռնա-Տմբլաչ»-1895թ.: Եվ չնայած վիպակի ու պատմվածքի ժանրային սահմանները ըստական պայմանական են, հաշվի առնելով ծավալը (32 էջ), կյանքի ընդգրկումը, հերոսների քանակը (ի դեպ, այստեղ ոչ այնքան առանձին հերոսների գործողությունների նկարագրությունն է, որքան բազմաթիվ հերոսների և սիրող պայմանների հակադրության երգիծական վերարտադրությունը), մենք ևս հակված ենք «Էն դյունին ահվալաթան» ֆելիետոնների շարքը ժանրային առումով համարելու երգիծական վեպիկ կամ ֆելիետոն-վիպակ: Այս ստեղծագործության մեջ, ուր նկարագրվում է խաչանի երագում կատարած ճամփորդությունը (Դժոխք-Դրախտ-Լուսնթագ), տեսնում ենք բժիշկների, իրավաբանների, դումայի անդամների, իմբրագիրների, վարժապետների, գրողների, գանձապետների, հոգաբարձուների, գործակալների, ճարտարապետների, հոգևորականների, անտառապահների, գողերի, մաքրասպանների, խաբեբանների՝ իրական կյանքում գործած բազում անիրավությունների ընդհանրական մեղայականը:

<sup>11</sup> Հալո նոր գրականության պատմություն, հ. IV, Երևան, 1972, էջ 574:

Ժամանակի մամուլն ու գրականությամբ զբաղվող մարդիկ նույնպես Կ.Մելիք-Շահնազարյանի երգիծական ստեղծագործությունները որակում են ֆելիետոն հուսալով, որ դրանց օգնությամբ ժողովուրդը կսթափվի տնտեսական, քաղաքական ու բարոյական քնից: «Աղբյուրը» խաչանին համարում է մեր արդի «նշանավոր ֆելիետոնիստը»<sup>12</sup>, իսկ Մելիք-Շահնազարյանի գրչընկեր Աշոտ Աթանասյանի (Սալ-Ման) կարծիքով «Տմբլաչի խաչանի ֆելիետոնները իրենց բովանդակությամբ և ձևով հիշեցնում էին ողու մեծ երգիծաբան Սալտիկով-Շչեդրինի "Губернские очерки" պատմվածքները: Սուր դատողություն, կյանքի հումորով լի հեզմանք ու ծաղր բոլոր տեսակի և դիրքի հարուստների և մեծամեծների նկատմամբ»<sup>13</sup>:

«Ձուռնա-Տմբլաչ» Ա, Բ գրքերում ֆելիետոնները թեմատիկ առումով բազմազան են՝ ընտանեկան-կենցաղային, սոցիալական, քաղաքական: Թեմատիկ տարբեր ֆելիետոններում ակնհայտ է հեղինակի վարպետության զրեթե բոլոր հատկությունների խտացումը՝ հոգեբանական թափանցում, սատիրիկ ընդվզում, ընդհանրացման ճաշակ, չարի գգացում: Կ. Մելիք-Շահնազարյանի ստեղծագործության գնահատությանն անցնելուց առաջ տեսնենք, թե վերոհիշյալ գրքի առաջաբանում ինչպես է նա հասկացել ու ձևակերպել իր գրական գործունեության հանրային նշանակությունը. «Երանի կարողանայինք սորանով մի փոքրիկ ծառայություն անել մեր հայրենակիցներին, որոնց մտավոր ու բարոյական առաջադիմության ջերմ փափագողներից մինն է տողերիս գրողը»<sup>14</sup>:

Կ. Մելիք-Շահնազարյանը խորապես յուրացրել է իր մեծ նախորդների՝ Աբովյանի, Պատկանյանի, Պոռոչյանի, Աղայանի, Սունդուկյանի, Պարոնյանի, Օտյանի ստեղծած գրական արժեքներն ընդհանրապես և արևելահայ ու արևմտահայ երգիծական գրականության ավանդները՝ մասնավորապես՝ կարևորելով հասարակական-

<sup>12</sup> «Աղբյուր», ամսագիր, Թիֆլիս, 1917, մայիս-հունիս, էջ 89:

<sup>13</sup> «Գրական թերթ» շաբաթաթերթ, Երևան, 1940, № 20:

<sup>14</sup> *Տմբլաչի խաչան*, նշվ. աշխ., գ. Ա, Առաջարան:

տնտեսական նոր հարարերությունների պայմաններում ազգի զարգացման առաջընթացը:

«Ձուռնա-Տմրլա» Ա, Բ ժողովածուները, որոնց նյութը հեղինակը քաղում էր մեծ մասամբ XIX դարի 80-90-ական թվականներին Արցախի հասարակական-քաղաքական, սոցիալ-կենցաղային հարարերություններից, պատմաագագրական շոջանում մեծ հետաքրքրություն են առաջացնում և թույլ են տալիս Տմրլաչի հաշանին համարելու իր ժամանակի ամենաաչքի ընկնող երգիծարանը արևելահայ գրականության մեջ: «Եվ եթե ընթերցող հասարակության հոծ ռազմությունը նրան քիչ ծանոթ է, - ինչպես նկատում է Աշոտ Աթանասյանը,- դրա պատճառը այն է, որ Տմրլաչի հաշանն իր պատմվածքներն ու ֆելիետոնները գրում է Ղարաբաղի բարրառով»<sup>15</sup>:

Տմրլաչի հաշանի ընտանեկան-կենցաղային ֆելիետոնները երգիծանքի ներգործող ուժով համակրդմանիորեն ընդգծում են կյանքի լուսավոր ու ստվերոտ կողմերը՝ պայքար ծավալելով հանրային կյանքում կանանց դերը ակտիվացնելու և նրանց նյութական մոլորություններից ձեռնազատելու համար: Օժտված լինելով երգիծելու ռացառիկ ձիրքով՝ Տմրլաչի հաշանը պատկերում է դարավերջի գավառական քաղաքի անցուդարձը՝ սպանիչ ծաղրի ենթարկելով վերնախավի «դամանների պընըփեշակը», սպառողական հոգեբանությունը: «Թիֆլիզ, Աոսկով, յա Պարիժ կարել տված փոփոռն դերյան հագին դամանները»՝ ողպես երևելի մարդկանց տիկնայք, հարկ չեն համարում Ղարաբաղի դերձակների մկրաստի տակից դուրս եկած հագուստները կրել:

Անփոխարինելի են իշխանուհի Մարիամ Թումանյանի վկայություններն այն մասին, որ հասարակական հնչեղության ինդիդները հայ քաղքենի տիկնանց շրջանում համակրության չէին արժանանում, որովհետև նրանց միտքը

գլխավորապես գրողված էր շլացուցիչ տարագների փնտրաուքով:<sup>16</sup>

Երփներանգ ծաղիկներով, փետուրներով զարդարված շլապաների տակ կքած շուշեցի դամաները «էլ ծետ չասիս, ճնջըմնջեղ չասիս», հռչում են՝ անցող-դարձողների զարմացական հայացքների ներքո քննարկում ընդհանուր ծանոթների վաղքագիծը: Նրանց գրույցից իմանում ենք, որ «Փայլանդուզանց տղան մինին տեղ երկու կնեզ ա պահըմ ու ափաշկարա Կիսլավասկում կոնըփոնոկ ման կյամ»<sup>17</sup>: Պակաս զավեշտական չէ Լիզայի մեկնարանությունը, ըստ որի մոդայի վերջին ճիչը «անըմավերանց հարսն ա», հեծանիվ նստած և գիմնագիստների հետևից զգած՝ ռաղերը, փողոցները «չափըմ ա»: «Վայ՛ վարսըս կտրիմ, ռա մարթը հիմչ ա ասըմ: Հինչ ա ասելու, վեր իոսըմ ա, հանց լանթ անըմ ճկատան կենըմ, վեր սյասը փորն ա ընգըմ»<sup>18</sup>:

Խաշանի համար ընդունելի չեն հայ մանուկների տրվող օտարամուտ անունները՝ Մարիմկա, Վառիմկա, Օլիմկա, Կատիմկա, Սոնիչկա, Լիզիմկա և այլն. «Մինը հրցընող ինի խէ՛՛ Հայոց կրողոց անըմնեն կլիալը՛ն, վեր մատուշկոցը անըմնեն ըն տինըմ իուլիուցը...»<sup>19</sup>: Արտացուլե-

<sup>16</sup> «Շատերը չէին բավարարվում Թիֆլիզի կար անողներով և իրանց զգեստները բերել էին տալիս Պետերբուրգից, Մոսկվայից և մույնիսկ Փարիզից... Ինչ-որ պարահան դեսին, որ ես էի կառավարում, մոտեցավ ինձ մի ծանոթ տիկին և հուզված ասաց. «Լարիա՛՛ Մարկովնա, այդ ի՞նչ խայառակ շոր եք հագել, դուք կառավարչուհի եք, ամենքը ձեզ են նայում, մի՞թե չէիք կարող տարազով հագնվել»: Ես հագած ունեի մի շատ գեղեցիկ զգեստ ռաց կապույա գույնի, ու ինձ թվում էի, որ այն հաջող էի կարված, այնպես որ տիկնոջ նկատողությունը ինձ չէփոքեցրեց, ու ես զարմացած հարցրի նրան, թե բանը ինչու՞մն է: «Դուք չգիտեք,- ասաց նա,- որ այսօրվս տարազը պահանջում է, որ դերյայի մեջքը լրսի ամբողջ կտորից, իսկ ձեզ մոտ մեջանդում կար կա, ուրեմն երկու կտորից է բաղկացած: Այս խայտառակությունը շատ աչքի է ընկնում, ու շատերն արդեն նկատել են այդ թերությունը»:

- Սոա՛յս այդքան,- բացականչեցի ես թեթևացած սրտով, որովհետև ենթադրում էի, որ սաստիկ մեղանչել եմ տարագի դեմ,- մի՞թե արժի ուշ դարձնել այդպիսի չնչին հանգամանքի վրա,- և չկարողանալով ինձ զսպել բարձրածայն ծիծաղեցի» (Թումանյան Ա., Իմ համառոտ կենսագրությունը և իմ հիշողությունները, էջ 65, 189):

<sup>17</sup> Տմրլաչի հաշան, նշվ.աշխ., գ. Բ, էջ 79:

<sup>18</sup> Անդ, էջ 78:

<sup>19</sup> Տմրլաչի հաշան, նշվ.աշխ., գ.Ա, էջ 33:

<sup>15</sup> «Գրական թերթ», 1940թ., 20 հուլիսի:

յով տվյալ ժամանակաշրջանում Շուշիում ընակ-վող կանանց հիմնական զբաղմունքն ու հետաքրքրությունները՝ Տմբլաչի հաչանը ցավալի փաստի առաջ է կանգնում: Այդ դամաները, որոնց շարքում են «Աննա Պետրովիչնան, Ելենա Նիկոտիչնան, Լիգան, Սաղաթելանց պրեկաշչի-գին կնեզը» կյանքում չունեն որևէ նպատակ, րացի վատնելուց ու «կավալերներ» որսալուց, մանր-մունր հարցերի շուրջ շաղակրատելով հերթական օրը սպառելուց: Ահա թե ինչ է պատմում Աննա Պետրովիչնան այն պրոֆեսորի մասին, ով ախտորոշել է իր հիվանդությունը. «Չալալ կես սիաթ շոտու շոտու ըրավ, սրտաս, մեջքաս անգուժ տիրավ, հրցըփորձ ըրավ, ա-սից վասպալեննի յախչնիցի ա մին էլ ներվեննի ազար...»<sup>20</sup>: Բժշկությունը համարելով «փողի թալսկ»՝ խոսակիցը ավելացնում է, որ քարը գլուխը, միայն թե հիվանդության պատրվակով կարողանան ամուսիններին համոզել և ամեն տարի առողջարան գալ: Ինչ իմանային այդ խիստ «յուսավերված դամաները», որ Ձուռնա-Տմբլան արդեն իսկ հեռագիր է հղել Շուշի՝ Յուռում աքորը. «Չարսիտ կապը քաշի. վեր դաչա դարկիս միտը երկու դարավուլչի տիր, վեր քշեր-ցիրեկ դարավուլ քաշին, թա չէ շատ ա արթմիշ իլալ, տական պեն այուս կը կյա»<sup>21</sup>: Ընտանեկան-կենցաղային ֆելիետոնների այս շարքը ամրողջանում է Տմբլաչի հաչանի ամանորյա շնորհավորանքով՝ ուղղված «մեծատուն խանրմներին»։ «Ըստվածանա ծեզ միաը հինչ ինթրիմ, քանի վեր ամեն հինչան թոլրոլ օնիք, մինակ մին պիժի պեն չօնիք՝ խելք»<sup>22</sup>:

Յնարավոր չէ սառնասրտորեն աչքի անցկացնել «Չայոց վեչերում» վալսի նկարագրությունը: Վերնախավի «մին քանե դյոշն ու խզատակնեն պեց հայասգեր» իրենց համարում են մոդայի հետևորդներ. «Լին դամա մին կափսլեր կոնրփոնոկ մի ըն մննըմ, մին երկու վեմնը քինըմ, մին մինու ըռաչի կաղնըմ, քլըմսոտըմ, մին մինու ըռըխի եշըմ, ժնգընըմ... մին պա-

տառ քինըմ, միեզ էլ ճկըռըմ, լիա մինը օսերան փոնած երա հարըմ ինի, յա չէ պցրանըմ, դերյան փոնըմ եր քաշըմ, վեմները նշանց տամ. մեչքին երա ուրորվըմ, տրորվըմ, էլիա կավալերին ըռիսին եշըմ ժնգընըմ:

- Ախճի, էնքան մարթին մեչի՞ն:

- Բա հշտե՞ղ»<sup>23</sup> :

Այսքանից հետո գարմանալու ոչինչ չկա, որ Տմբլաչի հաչանը հեռագիր է հղում. «Երկինք. յուսմին ու ըրեքնակին: Նհախ տեղան ըք յուս տամ, մեր ըխճըկերքն էլ ըն յուսավեր, մեր կընանեքն էլ. մեր համփեքն էլ, մեզ յուս չի պետք»<sup>24</sup>: հաչանը սուր քննադատության է ենթարկում ղլըցոց նաև իրենց մանկահասակ աղջիկներին բռնի ամուսնացնելու համար: Նրա ըմբռնումներին անհարիր են միջավայրի օրենքներն ու բարքերը, երբ աշխարհի չարին ու բարուն անտեղյակ փոքրիկ հարսնացուներին «հարամ ըպրանքու նմամ եր ըն օնըմ մին անտես-անճանանչ տղու տամ, խեղճ խուխին ումրըր սև անըմ»<sup>25</sup>: Տմբլաչի հաչանը դատապարտում է շուշեցի մեծատուններին, որոնք արժեզրկում են հարսանեկան ծեսի խորհուրդը: Նրանց մտահոգությունը ոչ այնքան ամուսնացող զույգի երջանկությունն է, որքան դրամի ուժի և շրջապատի նկատմամբ սեփական գերազանցության ցուցադրումը: Իսկ այդպիսի հնարավորություն չունեցող մարդիկ րարոյապես ճնշվում են, կաշվից դուրս են գալիս՝ արժանապատվիրեն հաղթահարելու այդ փորձությունը. «Մի ըխճկատեր յա մին տղատեր, վեր վեց օխտը հարուր մանեթ պարտքի տակ չընկնի, յոյս նրա հրսանեքը հարամ ա, իսկի հրրսնընքու հեսարի չի... իրեք օր լիա մին դոշուն հնգեր հրըվանու հաց պեդմա տա, վեր բեքեֆ չիմին՝ անեժքը թափին, յա տնագ անին...»<sup>26</sup>:

հաչանը լուրջ մտահոգություններ ունի՝ մի կողմից Ղալին խերն ու շառը, մյուս կողմից իր յոթ աղջիկների հոգսը, որ «մին մինու հետա հսալ ըն» ու «մուշտարի չի ճարվում, վեր կլխառադ անի»: հաչանի աղջիկները մեծատան աղ-

<sup>20</sup> Տմբլաչի հաչան, նշվ. աշխ., գ.Բ, էջ 75:

<sup>21</sup> Անդ, էջ 88:

<sup>22</sup> Անդ, էջ 197:

<sup>23</sup> Անդ, էջ 126-127:

<sup>24</sup> Տմբլաչի հաչան, նշվ. աշխ., գ.Ա, էջ 66:

<sup>25</sup> Անդ, էջ 45:

<sup>26</sup> Անդ, էջ 40:

քիկների նման անամոթ չեն. «շենքով, շնորհքով, մարալ», իսկ փողոցում «վեր լիսխալի քի-նը մ չին տղամարթեքը դրոն-դարան ին ընկնըմ, վախըմ ին թա պարան կըկյան ուրանց տա-կավն անին»<sup>27</sup>, բայց արի ու տես, որ բախտ-ները չր բացվում, «պեժինք էլ չօնին, վեր թա-մահ անող տանող ինի, տարավ էլ, հու ա գի-տըմ մին շաբթան ետը բալքամ դավի տվավ թա վենկի սհաթ յա թոխկա չըս տվալ, ըխճըկատ յորղան-դոշակ, ըլթավա, լյագւսն, բոյահիլի, կամող, միժմահի, գյաբա-կւտրպետ, խալի, խա-լիչա...» և անհանգստանում է հաչանը, որ օ-ժիտ չունենալու պատճառով կնվաստացնեն իր աղջկան ու «խնչըխարավ ըժելավ»՝ ետ հոր տուն կուղարկեն<sup>28</sup>: Տմբլաչի հաչանի մտահո-գությունը ժամանակավրեպ չէ. ժողովրդի ա-ռողջ մտածողությունն ու վերաբերմունքը օժի-տի նկատմամբ, ցավք, այսօր նույնպես ան-ըմբռնելի է սնանկ հոգիներին: Կենցաղի բացա-սական արտահայտությունների մեջ տեսնելով հասարակական չարիք՝ երգիծաբանը մտա-հուզվում է «ղըլըցե կանանց» ստրկամիտ-եժան հոգեբանությամբ: Նա համընդհանուր անհան-դուրժողական կարծիք է ստեղծում՝ վերջիննե-րիս հակադրելով ազգային առողջ ավանդների կողողներին: Նա ծաղղում է գավառական քաղ-քենիների վարք ու բարքը, կանանց երկար ու բարակ խոսքի բռնվելը («Լին պատառ կաղ-նեցին, մին մինու ծեռքա փռնեցին, իրեք չորս հետ պարի քշեր ըսեցին ու տղըներան տու-րուր չեկան»<sup>29</sup>), սահմանափակ հետաքրքրու-թյունները, մանրացող ու գորշ բնավորությունը, սնոտիապաշտությունը: «Չգեր մանեթական շան-ճախը» (քորոց) կորցրած Գյուլումը «ռանգ ու-շը թռած» պատեպատ է ընկնում, մազերը պո-կոտում, ծնկները ծեծում: Տեգը կինը օգնու-թյան է կանչում գրբաց Ակոփին: Ձավեշտական է գիր անելու արարողության նկարագրությու-նը. «...Առաջ մին սև հավ մորթել տրվավ, ար-նավր ծվրն երա խզմզողից, տրվավ վեր օջա-

լըմը թաղին, մին քշկոռ շինից մեչը ասեղներ խրից՝ տրվավ վեր վլխըտապր պերցըմը տընին. մին էրկան թողթ շինից, երան կորոտից աչու-ծախ խչըփարք, տրվավ վեր ջրին մեչը քցին խմըցնին, ետման ջամը փրավ ըռաչին, սըտը-նոցը կանչից, վերին բախշից, վերին էլ փռնից դարդուին մեչը քցից, մուսավ ռեխը պենդ կա-պավ, վեր տյուս չի կյան փախչին, էն էլ տվավ վեր տանին հանգիստարանըմ մին մռալի կլ-խի տակի թաղին...»<sup>30</sup>: Իսկ քորոցը գտած Պետ-րոսին իր լի դրամապանակից Գյուլումը ընդա-մենը երկու-երեք շահի է բաժին հանում՝ պատ-ճառաբանելով, թե գտածը ինչ է («մին ֆալշովի գատ ա») և ակամատես լինելով վերջինիս դժ-գոհությանը՝ դռնապան Մոսուն կարգադրում է. «Էն մարթին դրվազան տյուս քցի, տոռնը քըլլի. մղայիթ կաց գատ չր յոր օնի, ընդրա աչկերը կյողու աչկեր ա իրեվրմ»<sup>31</sup>:

«Ձուռնա-Տմբլա» Ա գրքի ֆելիետոնները մեծ մասամբ արծաղծում են ընտանեկան-կենցա-ղային և սոցիալական հարցեր: Այս գողտրիկ ստեղծագործություններում առկա են ամուսին-ների փոխադարձ սիրո ու հարգանքի վրա հիմնված ամուր ընտանիքի, քաղաքավարու-թյան կանոնների պահպանման և մարդկային այլ առաքինությունների ջատագովում, մյուս կողմից՝ բռնի ամուսնության, կենցաղում և մտ-քերի մեջ իշխող տգիտության, կուպտության, քինախնդրության և այլ վեասակար սովորույթ-ների ու բարքերի պարսավում:

Քաղաքում հարստացած քաղքենի եղբայրը թույլ չի տալիս հարազատ քրոջը մասնակցելու իր նշանդրեքին, որովետև քույրը գյուղում է ծնվել, մեծացել, հագինն էլ մետաքսե «խշխշան դերյա չի», այլ «չաքավեր ըրխալուղ»: Խաչանը մեղքը բարդում է միջավայրի վրա («էհ, հինչ ասիմ, այամն ա փիս...») և կոսելով մինչև հո-գու խորքը վրավորված քրոջ վիշտը՝ հեզման-քով ավելացնում է. «Ռուսեթու վետած սեյողկո

<sup>27</sup> Աճղ, էջ 70:

<sup>28</sup> Աճղ, էջ 71:

<sup>29</sup> *Տմբլաչի Բաչան*, նշվ. աշխ., գ.Ա, էջ 2:

<sup>30</sup> Աճղ, էջ 12:

<sup>31</sup> Աճղ, էջ 15:

մչանք էլ պատիվ չոնիս, վեր քեզ էլ սուփրին  
երա նստըցնին»<sup>32</sup>:

Ինչպես Ղարաբաղի գվարճախոս Պըլ Պու-  
դին, Խաչանը նույնպես կրում է որոշակի սոցի-  
ալական գաղափարներ: Պուդին ինքը մանրա-  
պատումներում ներկայանում է իբրև աղքատ  
գյուղացի<sup>33</sup>: Ըստ մի գվարճապատումի՝ նրա  
ողջ ունեցվածքը տեղավորվում է մի խուրջինի  
մեջ<sup>34</sup>: Ջուռնա-Տմբլւս № 13-ի «Մին քանն ան-  
քննելի պեներում» Խաչանը նույնպես մի հա-  
սարակ, չքավոր գյուղացի է, որի «թողած էրկու  
դայամ կայքը դադիմի գուռնան ար, մին էլ  
տմբլւսն ուրան կուպլներավը»<sup>35</sup>: Կամ մեկ այլ  
ֆելիետոնում գետեղված «Կտակից» տեղեկա-  
նում ենք, որ իր կնոջից բացի, Խաչանը «ան-  
շարժ կայք» չունի («ընդրա ձեռք տվողը հորավ  
մորավ իրեք կտոր տեռնա»), իսկ «շարժական  
կայքս օխտը հսած-փսած ըխճըկեքըն ըն՝ Յու-  
ոին, Աղթին, Գյուլին, Շուղին, Նագլուն, Ֆլորեն-  
ցիան, Մարգրաֆիան»<sup>36</sup>: Պարզվում է, որ Խա-  
չանը հյուրին թեյ առաջարկելու հնարավորու-  
թյուն անգամ չուներ («խոսքը մեր մեջը մնա,  
վեչ մին քցելի չայ օնինք տանը, վեչ էլ էրկու  
կռոճ շյաքար»<sup>37</sup>): Ճնշվածների պաշտպան Պըլ  
Պուդու նման նա ևս ըմբոստանում է ընդդեմ  
դասային արտոնությունների և սոցիալական  
ոտնձգությունների, ի պաշտպանությունն ինեղ-  
ճերի, անհրավության գոհերի, ուլթեր կեղեքիչ-  
ների անսանձ հարստահարումից ոչ միայն չեն  
ստորանում, այլև ավելի արժանապատվորեն  
են ըմբոնում մարդու կոչումը: Տմբլւսի Խա-  
չանի սոցիալական ընկալումների տեսանկյու-  
նից ուշագրավ է հարուստների և աղքատների  
ճաշացուցակը: Շաբաթվա բոլոր օրերին հա-  
ըուստների համար բժիշկները խորհուրդ են

տալիս խիստ հագեցած, անմարս ուտելիքներ,  
մինչդեռ աղքատների համար՝

*«Երկուշեթո - ցամաք հաց.*

*Իրեքշերթի - թրջած հաց.*

*Չուրըքշերթի - փիրփեթ.*

*Յինգըքշերթի - փիրփրտաճյուր.*

*Օրփաթ - հրըվանա փոխ առած հաց.*

*Գյիրգյամուտ - պաներ հաց թա վեր ինի:*

*Գիրակի - Ասոու տվածան:*

*Կանդիստորականներին մհար սաղ չա-  
փաթը քյուֆթա:*

*Շուշըվցուց մհար սաղ տարին վչխարու  
թափան»<sup>38</sup>:*

Ինչպես ասում են, մեկնաբանություններն ա-  
վելորդ են:

«Բարովակրի» «Տական-կլխան» բաժնում  
Խաչանը ընթերցողին հանելուկ է առաջարկում  
գուշակելու դեպքում խոստանալով նվիրել թմ-  
րուկի փայտերը: «Մին պնգը. - Էն հու ա՞ մեչ-  
տեղ օտըմ ա, դրաղ շոռ կյամ, դրաղ օտըմ, մեչ-  
տեղ շոռ կյամ:

(Յու վեր քթնի, տմբլիս կուպլենն ուրան փեշ-  
քեշ)»<sup>39</sup>:

Աշխատավոր մարդկանց նկատմամբ տա-  
ծած սերն է, անշուշտ, դրդել Տմբլւսի Խաչա-  
նին ձաղկելու սոցիալական անհավասարու-  
թյունը և մարդկային արժանապատվության  
ոտնահարումը:

Իր սոցիալական ծանր վիճակը շտկելու  
նպատակով մի օր էլ Խաչանը կողքի է դնում  
Ջուռնա-Տմբլւս և որոշում է դիմել Բաքվում  
որոշակի դիրքի հասած բարեկամներին: Վեր-  
ջիններս խուսափում են Խաչանից, նրա բարևն  
անգամ չեն առնում, իսկ Թանկողանց Կյալուս-  
տը, ենթականերին աջ ու ձախ հրամաններ ար-  
ձակելիս Խաչանին տեսնելով՝ «քթին տակին  
մին գատ մոմոաց, շոռ եկավ մին կեռ գուռնա  
տիրավ ընգուճին, դուդին, մինն էլ ուրան պրա-  
նին, ինքն ուրան մին խիլս տական-կլխան  
տյուս տվավ, լիա էն հսկացի, վեր ասըմ ար -

<sup>32</sup> *Տմբլւսի Խաչան*, նշվ. աշխ., գ.Բ, էջ 68-69:

<sup>33</sup> *Ղազիյան Ա.*, Ղարաբաղի գվարճախոս Պըլ Պուդին, «Լրա-  
բեր հասարակական գիտությունների», 1978, № 9, էջ 66:

<sup>34</sup> *Շերմազանյան Գ.*, Անեկդոտներ, գվարճալի գրույցներ,  
համառոտ դեյքեր և առակներ մեծ մասամբ ազգային  
և անցից առած, Թիֆլիս, 1878, էջ 189:

<sup>35</sup> *Տմբլւսի Խաչան*, նշվ. աշխ., գ.Բ, էջ 2:

<sup>36</sup> *Տմբլւսի Խաչան*, նշվ. աշխ., գ.Ա, էջ 98:

<sup>37</sup> *Տմբլւսի Խաչան*, նշվ. աշխ., գ.Բ, էջ 3:

<sup>38</sup> *Տմբլւսի Խաչան*, նշվ. աշխ., գ.Ա, էջ 66:

<sup>153</sup> Անդ. էջ 48:

<sup>39</sup> Անդ:

հը՛, հը՛, հա՛, հա՛, հո՞ւ, չէ՛, հա, չէ՛, չէ՛, չէ՛, կրիզիստ ա, հա՛, դե կրիզիստ ա, հունց պեղմա անհնք»<sup>40</sup>: Խաչանը այդպես էլ չի հասկանում, որ Կյալուստը հեռախոսային խոսակցությամբ է զրադված և նրանից քիչ ջանքեր չի պահանջվում պարզելու համար, որ «կրիզիստ» նշանակում է շահի և կրողպուտի կատաղի մրցավազքից ետ մնալ: Բայց մի րան պարզ է խաչանի համար. Բաքվի ֆինանսական ճգնաժամը պատճառարանող րաընկամների անտարբերությունից դառնացած՝ նա կրկին ձեռքն է առնում իր «դաղիմի Ջուռնա-Տմրլան»՝ մի անգամ ևս համոզվելով վերջիններիս անփոխարինելիության մեջ:

Տմրլաչի խաչանը ատում է կուտակման մուլուցքով տարված դրամական աշխարհի տերերին և որպես յուրատեսակ նախազուշացում, րավական արդիական հաըցադրում է անում. «Խե՛ չըն էնքան օտըմ, վեր կաըին մարսին, մին էլ կեըածնեն գկեռալավ ըմխներավը վեր չածին»<sup>41</sup>: Այս առումով շատ տեղին է Տմրլայի հեռագիրը.

«Պարիժ. Կիստավկա սարքողներին:

- Աին մեծ տեղ պիեցեք, Կավեագան հենգ փրգոն փողը ծով շինած, ազկու, հնգեըու, պարեկամու փողեր կոլ տված ազկային փողեր ընք թմաշա դրկելու»<sup>42</sup>:

Կստահություն չեն ներշնչում ժամանակր իյիղճն ու արդարադատությունը, խախուտ են րարոյական չափանիշները:

Շահի գաղափարը գերիշխում է ամենուր. ոչ՝ աշխարհականն է իր րարձրության վրա, ոչ՝ հոգևորականը. «Տիլիփոնավ մին քանե հարյուր պառավ ըխճըկեըք, մրթաթող կնանեք մգանա հրցնըմ ըն, թա րա Կենտըոնական ժողովը վրթըրեղներին փսակվելին մհար հի՞նչ կարքատըություն ա ըրալ. հի՞ր էջմիածին կյանք»<sup>43</sup>: Տմրլաչի խաչանը մի կողմից քննադատում է հոգևորականության արատները, մյուս կողմից «նըա համար գլխավոր մտահոգիչ հաըցեր են

դառնում մասնավորապես երիտասարդության «խաչից ու եկեղեցուց» հեռանալու տարածվող հոգեբանությունը, հոգևոր հայրերին փոխարինելու եկած աշխարհական վարդապետների լուծերական քաըոգները»<sup>44</sup>: Այդ «կուտուրվածք ջահիլնեն ըն, վեր իսկը դեր ու տիրացուի, մեծ ու պուճուրի սայմիշ չըն անըմ, վեչ արուռ օմին, վեչ համանչ»: Հայ քըիստոնյա եկեղեցին թողած, Միըգաջանի պատերի ներսը եկեղեցի են շինել. անտեր պատարագ են անում, անմեռոն եըեխա մկրտում, պսակվում, անխաչ, անխաչվառ, անպատան մեռել թաղում: Եկեղեցու գանգերը իզուը են դողանջում, շարաթամեջի ժամ գնալը կտրվել է, մոռացվել. «Չէ, ա մոլորված հայեր, էտ վեչ քըիստոնեություն ա, վեչ էլ լուտերականություն, ըստեղ մին օրիշ հաշիվ կա»<sup>45</sup>:

Տմրլաչի խաչանը առաջ է քաշում ուսուցման գործը համեմատարար առաջադիմական մեթոդներով կազմակերպելու և ժողովրդի միտքը լուսավորելու խնդիրը: Նա քննադատում է աշակերտներին սահմանափակ գիտելիքներ հաղորդող վարժապետներին և հեզմանքով առաջարկում դասավանդման նոր եղանակ. «Պետմա մատիտին քեթը սրել, կիրին երա, տյասին տեղը կլխին էլ, տակեն էլ մին մին խաչ տինել ու ասել ըստղան-ըստեղ»<sup>46</sup>:

1892թ. «Ջուռնա Տմրլայի» ծանուցումից տեղեկանում ենք, որ «մյարդի տասն օխտին Տմրլաչի խաչանին հետն ու թեփուը կրրավ. շատերն ասըմ ին եր հմրարցվրց, շատերն էլ թա մեռավ. թա դորթ ինի, ըսեցեք աստված հոքին լուսավերի»<sup>47</sup>: Թե իր մահից հետո ինչպիսի ճակատագրի կարժանանա Ջուռնա-Տմրլան, խորապես հուզում է խաչանին, որովետես Ջուռնա-Տմրլան խաչանի կոչումն ու արժանապատվությունն է, ուստի նա մտահոգված է վեըջիմներիս արժանի մեկեն փոխանցելու խնդրով. Այնքան մեծ է խաչանի ակնածամըը այդ գործիքների նկատմամբ, որ րագում սրրություններ

<sup>40</sup> *Տմրլաչի խաչան*, նշվ. աշխ., գ. Բ, էջ 92:

<sup>41</sup> Անդ, էջ 140:

<sup>42</sup> *Տմրլաչի խաչան*, նշվ. աշխ., գ. Ա, էջ 137:

<sup>43</sup> *Տմրլաչի խաչան*, նշվ. աշխ., գ. Բ, էջ 234:

<sup>44</sup> Հալ նոր գրականության պատմություն, հ. IV, էջ 573:

<sup>45</sup> *Տմրլաչի խաչան*, նշվ. աշխ., գ.Ա, էջ 44:

<sup>46</sup> Անդ, էջ 93:

<sup>47</sup> *Տմրլաչի խաչան*, նշվ. աշխ., գ.Բ, էջ 1:

մի կրղմ թողած, Խաչանը երդվում է նրանց անունով: «Ձուռնա-Տմբլիս արևավը ուրթըմնըմ օտըմ...»<sup>48</sup>: Ավելի լավ է Ձուռնա-Տմբլիս կացնի տակ գցել, ջարդոփալորդ անել, քան անշնորհք մարդու վստահել: Ինչպես Հայաստանի այլ ազգագրական շրջաններում, Արցախում ևս ժողովրդական նվագողներին վերագրվում է արտակարգ խելք, խորաթափանցություն, գուշակելու ունակություն և իրենց «փեշակը», վարպետությունն ու երկացանկը սերնդեսերունդ և ժառանգարար փոխանցելու պարտավորություն: Խաչանի մտահոգությունը խոր արմատներ ունի և արժեքավստված է ավանդույթների պահպանման տեսանկյունից: Ավանդույթը ժողովրդական նվագողների մտավոր հասունությունն ու խելքությունը ստուգում է հանելուկների առաջադրելով, նրանց վերագրում է անսպառ հունոր, ազատախոհություն, տարածիտվող կարծիքների բախման ոլորտներում, վեճմրցույթներում մշտական հաղթանակ: Միջնադարյան գերմանական Վարտբուրգի հոջակավոր մայստերգինգների (երգիչների) մոտ, ըստ ավանդության, նույնիսկ շարունակել է պահպանվել վաղեմի կենցաղին բնորոշ մրցության մեջ պարտվողի՝ սեփական կյանքով՝ դիմացինի հաղթանակն հատուցելու բարարոս սովորությունը: Հանելուկը ճիշտ գուշակող ժողովրդական նվագողին (հանելուկներով մրցահանդեսները բնորոշ են եղել հատկապես աշուղներին) պարտվողը հրապարակավ հանձնում է սեփական նվագարանը՝ (սագը) իրրև բարոյական փոխհատուցում<sup>49</sup>: Պատահական չէ, որ աշուղներն ու ժողովրդական նվագողները աստվածատուր էին համարում իրենց ձիթը. որպես հին հեթանոսական հավատալիքների քրիստոնեական վերապրուկ, հայկական միջավայրում անվերապահորեն ընդունված էր Մշո Սուլթան սուրբ Կարապետից օժտված լինելու առանձնաշնորհը՝ իբրև սրբոց տուրք:

Խաչանի համարձակվելուց հետո՝ երեք ամիս շարունակ, հարագատները հարմար մարդ էին

որոնում, սակայն ամեն անգամ երագում հայտնվում էր Խաչանը, հոխորտալով իր անհամաձայնությունը հայտնում թեկնածուների նկատմամբ: Վերջը կանչեցին քավոր Ուհանին («ողորմածիոքին սաղիքան նիետը շատ դոստար»), Խաչանն անմիջապես «էն ոյունյան թլդրամ դարկից», շնորհավորելով Ուհան պելուն. հետն էլ մի երկարաշունչ նամակ-րարովակիր կցեց «էն ոյունին ահվալաթան», որտեղ պատմում էր իր անհետ կորչելու պատմությունը, ըստ որի «մին փըսընգյու քշեր իաըփըշ տանը քոն իլած վախտը» ինչ-որ մեկը «կողքին բշտիբշտի ա անըմ», պահանջում քնից վեր կենալ և հետևել իրեն: Սկզբում Խաչանին թվում է, թե հարսանքատնից են կանչում և սկսում է դժգոհել. «Աղա հինչ հրսնեքու վախտ ա, պելըս, թա կլխիտ ծի ա քացի տվալ. վեր քսան մանեթ էլ տաս, կյալ չըմ» ասելով պատրաստվում է կրկրն փաթաթվել վերմակը մեջ, մեկ էլ երեսին ուժեղ ապտակ ստանալով՝ սթափվում է, տեսնում. «Կափրել դային ա, եկալ ա էն ոյունյան քուչընցի»<sup>50</sup>: Ըստ կրոնաառասպելաբանական պատկերացումների՝ Գարրիել հրեշտակապետը՝ որպես հոգեառ կամ գրող, շրջում է ամրոդջ աշխարհում Աստծո հրամանը կատարելու համար: Խաչանի պարագայում ևս Գարրիել հրեշտակը այցը ընկալվում է իբրև հակամարտություն, մեռնողի կռիվ՝ հոգեառի դեմ: Աղաչանք-պաղատանք, հոխորտանք՝ ոչինչ չի օգնում: Կափրել դային Խաչանին առնում է թևերին ու տանում մի անտակ անդունդի վրա ձգվող մագի կամուրջի դեմ առնում, թե՛ «Խաչան, դե հյունարըտ նշանց տո, անց կաց էն թյարափը»<sup>51</sup>:

Պարզվում է, որ մագի կամուրջը սահմանագիծ է դրախտի և դժոխքի միջև: Ուն հաջողվում է անցնել սահմանը, նա արդար է ճանաչվում և դրախտի անձնագիր ստանում:

Ղարաբաղի հայոց թեմական հոգևոր դպրոցի և ապա Էջմիածնի Գևորգյան ճեմարանի շրջանավարտ Կ. Մելիք-Շահնագարյանը, ուսում-

<sup>48</sup> *Տմբլաջի Խաչան*, նշվ. աշխ., էջ 111:

<sup>49</sup> *Մրվանձոյան. Գ.*, Մանանա, Կ.Պոլիս, 1876, էջ 311, էմի-նյան ազգագրական ժողովածու, հ.Բ, Մոսկվա-Վաղարշապատ, 1901, էջ 276:

<sup>50</sup> *Տմբլաջի Խաչան*, նշվ. աշխ., գ. Բ, էջ 2-3:

<sup>51</sup> Անդ, էջ 6:

ճանաչողական տարիներին ձեռք բերելով գիտելիքների հիմնավոր պաշար, քաջատեղյակ լինելով հանդերձյալ կյանքի վերաբերյալ կիսական ավանդություններին, իբրև գեղարվեստական հնարանք օգտագործում է հայոց մեջ ընդունված այն նախնական հավատալիքը, ըստ որի՝ հոգին կարող է նաև ժամանակավորապես թողնել մարմինը, ճամփորդել տալքեր տեղերում, անգամ ուղևորվել անդրաշխարհի և կոկին վերադառնալ մարմին: Հոգու այդ ուղևորությունը կատարվում է սովորական քնի ժամանակ, իբրև երազատեսություն, ու Տմբլաչի հաչանի հոգին ևս, մի քանի օրով անջատվելով մարմնից, «տեսիլք» է գնում անդրաշխարհ («էն դունյա»):

Հաղթահարելով դժոխքի և դրախտի վրա ձգված մագե կամրջի փորձությունը (հաչանը արդար է, ուստի և առանց կամրջից գլորվելու հանգիստ անցնում է դրախտ)՝ նա անդրաշխարհում ականատես է լինում իր արդար համաքաղաքացիների խրախճանքին և մեղավորների ողորկոծին: Վերջիններիս նկատմամբ հաչանը դրսևորում է բացահայտ անտարբերություն՝ անասելի տառապանքը համարելով արժանի փոխհատուցում: Նրան զարմանք է պատճառում դրախտի և Շուշիի հակադրությունը: Այստեղ ոչ ամառ ու ձմեռ կա, ոչ հարուստ ու աղքատ, ոչ վեճ ու կոիվ, «վեչ դումա կա, վեր գլասնեքը սաղ տարին քինան անխոս նստին, անխոս երկենան, տեսման լլուսը պեցված առանց ուրանց մենեին հրցնելու՝ կործերը վճռած վերջըրած»<sup>52</sup>: Դրախտում անմահական աղբյուրի խմիչքների և խորտիկների առատությունից ապշահար՝ հաչանը հեզմանքով հիշում է ղըլըցե հարստահարողներին. «Հա՛ գիդի, մեր վանքերին աչքըժակ վրթըրըղոտենք, անկշտըմնը դերեր ու տիրացուեք, կնդստորու անթամնե յա պոլիցխանու միրգեք, հշտեղ ըք, ասըլ ծեր տեղն ա, մին տյուս եկիք է՝...»<sup>53</sup>:

Այնուամենայնիվ, «էն դունյից» Ուհան պելուն հղած անթվակիր նամակում («այնտեղ ոչ ամիս կա, ոչ ամսաթիվ»), հաչանը կարոտելով

Շուշիի ծեծկոտուքը, իր դժգոհությունն է հայտնում «անհամ-ընալի» դրախտից. «Ախր մի տեղ վեր դլմադալ, թակո մհակ չինի, քթըպռոչ չի ճարթվր, արյուն չի տյուրուր կյա, հի՞նչ տեղ ա, մարթ թամահ կանի իտի տեղը քինա»<sup>54</sup>:

Անսալով հաչանի թախանձանքին՝ Սերորը նրան մատնացույց է անում դժոխքի կածանը՝ այնտեղ ոչ ոքի հետ չառնչվելու խիստ պայմանով, Մի տասս վերստ գնալուց հետո հանկարծ պայթյուն է լսվում. երկինքը ղղրղում է, գետինը պատռվում, հաչանի ոտքերի տակը կոակվում է, և նա գլորվեմ է անդունդը: Դժոխքի հնոցում նա ճանաչում է իր ծանոթ, անխիղճ «ղըլըցեներին»՝ «ատվակատներին», «կանծապետներին», «կործակալներին», «ապիկուններին», «ծախու գրչակներին», ըլոր խարդախներին՝ առանց բացառության: Եվ այդ տանջահար ամբողջը հաչանի միջոցով լուրեր է ուղարկում Ղալա, որ իրենց որդիները կանգնեն ազնիվ ճանապարհի վրա, թե չէ «էն դյունյումը» իրենց շամփուրների վրա կխորովեն, սրտերը կոանեն և տեղը «դուրդուշում» կլցնեն, կամ էլ «րուղազըմը ռահաթի տիրած՝ հալած արճիճ կիւմացնեն»<sup>55</sup>: Լաց ու կոծով օգնություն հայցող այդ ամբողջին՝ հաչանը միայն մի պատասխան ունի. «Հի՞նչ ճար, հունց վեր փրբալ ըք, ընդհենց էլ կիրեք»<sup>56</sup>:

Չափազանց մոտիկից տեսնելով Լուսնկան՝ հաչանը խնդրում է Աերորին թևերի վրա առնել իրեն և բարձրացնել «յուսնընգին կլոխը»: Ընդառաջելով հաչանի վերջին խնդրանքին՝ Սերորը մի փայրկյանում նրան հասցնում է Լուսնկայի թոփխանա. «էտ թոփխանան վեչ մեր Ղարարդին թոփխանին նման ար, էշը, ճյորին, մարթը ուրուր խառնված, վեչ Գյանջու մեյդանին, վեչ Բաքվա յարմուկին, վեչ Թիփլիզու սալղատսկի բագարին, վեչ Երևանա, Դրանդա յա Շամախու շեյթան բագարներին, հշտեղ լոթի, փոթի, պաժարնի, ջուրգիր, համամչի, քյաբաբչի, բախկալ, չախկալ ուրուր կլոխ ճղելավ տրութակ ընելավ, յա առուտուր ըն անըմ, յա մին մինու կլոխ եղելավ, վենատակ քնդելավ

<sup>52</sup> Տմբլաչի հաչան, նշվ. աշխ., գ.Բ, էջ 10:

<sup>53</sup> Անդ, էջ 8:

<sup>54</sup> Անդ, էջ 11:

<sup>55</sup> Անդ, էջ 16:

<sup>56</sup> Անդ, էջ 20:

անասելի պեներ անըմ: Էտ թոփխանըմը մարթը մարթին քյարգըմն ար, տավարը տվարին, հեյվանը հեյվանին»<sup>57</sup>:

Եվ Տմբլաչի հաչանը հիացնունքով է խոսում դրախտի թոփխանայի բարեկարգ ու լուսավոր փողոցների, սառնորակ աղբյուրների ու ծառուղիների մասին, նշում է, որ Շուշիում այդ նպատակով հատկացված միջոցները կուլ են տալիս ու ցեխառ փողոցներում «ըրըվյուսավյա ճրըքյուսավ մարթ ճոխտ վեննուք մեչին հանց րաթմիչ ա ինուն, վեր կարում չի թա տյուս կյա»<sup>58</sup>: Հետո հաչանը այցելում է դրախտի թոփխանայի մսավաճառներին. «Մինը սյուս չի եկավ իզվոլտե պաժալուստա ասից, յա փեչկաս կացավ գոռավ դյուքանը նի քցից, հունց վեր մեր սովոաքարներին պենը փեչակն ա»<sup>59</sup>:

Շուշիի «Թոփխանա» և դրախտի թոփխանա հակադրությամբ Տմբլաչի հաչանը իր հիասթափությունն է արտահայտում այն իրական միջավայրից, որտեղ ապրում է ինքը, որտեղ առօրեականը կեղծիքն ու քծնանքն է, դավերն ու թշնամանքը, առաքինիների շնորհագրկունը և ապիկարների բարձրացումը: «Էն դյունին ահվալաթան» վիպակ-ֆելիետոնում «Ուհան պելուն» հղած նամակում հաչանը պատմում է, որ դրախտում գիշեր ու ցերեկ չկա, ամբողջ օրը յույս է, «հունց վեր մեր Բաքվա մըժըմեժանց սպալնոցը կանաչ-կարմուր յուսը», «ըստեղ ատվակատ, սուղիա, պրիսուսվ, յասաղուլ, քյոխվա ու մողրով չի կա, վեր ըորշվաթավ սուտը դյուգրցնին, սևը սիպտակըցնին, հշտեղ չյաթուքյասաննե կան, թլակա րգադին, էլիա մեյղան քցին»<sup>60</sup>: Տմբլաչի հաչանի արդարադատ հոգուն անհամատեղելի է իրական Թոփխանայում տիրող ամեն գնով դիմացինին խաբելու վնասակար սովորույթը: Նա չի կարող ձևացնել, թե անտակ-անհատակ հոգսերից անհալած է իր ժողովուրդը, խնդիր, պակաս ու պոատ չունի: Հովանավորչություն, կաշառակե-

րություն, աչքակապություն. տգիտություն. կեղծավորություն, ստրկամտություն. ոչինչ չի վոփպել նրա գրչից: Տմբլաչի հաչանի տեսադաշտից դուրս չեն մնացել շուշեցի քաղքենուհիներն ու կեղծ ազգասերները, շահամուլ բժիշկներն ու իրավարանները, թեմական վերատեսուչն ու հոգաբարձուները, ինքնակոչ սրբերն ու վաճառականները, լյութերականներն ու լուսավորչականները: Գրողը մատնացույց է անում ոչ միայն գավառական կյանքի հետամնացությունը, կենցաղում ու մտքերի մեջ իշխող հնածես սովորույթները, սոցիալական ճնշումն ու անարդարությունը, այլև աշխարհի քաղաքական անցուղարձերը, Հայոց հարցի միջագային քննության հետ կապված աճաբարությունները. «Ախր խե ընք մուռանըմ, վեր էրեզ մեկալ օրը հային կտորըմ ին, շեները կոակ տամ, վե՞ր Եվրոպու յուսավեր սոցիալիստը հային կոնան փոմից, յարան լվըցըրավ, յա մին քաղցր խոսք ասից. վեր նեմեցը, ֆոանգը, ինգլիզը յա պարկապուկ փչող խտալացին եկավ ըրտասունքը սրփից. ախր պատառ մետք ըրեք է՛...»<sup>61</sup>: Եվրոպական դիվանագիտության աչառու խաղերի հետևանքները ճաշակած հայ մարդու ամբողջ գայրույթով 1895-ի արևմտահայ դեպքերի թարմ տպավորությամբ, «Էն դյունին ահվալաթան» վիպակ-ֆելիետոնում «Սերոպ-Քիրոփի» օժանդակությամբ դժոխքում շրջագայելուց հետո, հաչանը որոշում է. «Քինամ Օսմանվան եկած հային հլըհարցում անին, համ էլ Բիկոնսփիլդին, Գամրեստին, Գարիրալդուն ակո տամ, տեսնամ Բեռլինում շինված 61 սիմանի հայերին բաշխած սագին միար հի՞նչ ըն ասըմ, տեսնամ Սերոպը առաջ կտրից, կղնըցրավ, հաչան թորնըս քինըմ, մտկենըտ գիղըմ ըմ քինալըտ գուր ա, էտ սագր էսա 16 տարի ա, վեր ճնգճնգցնըմ ըն, ճնգճնգցնըմ, թող անըմ. վերը սիմերն ա քոթ անըմ, վերը պյութակնեն շոտը շոտու անըմ, վերը փյարղեքը ետ ու առաչ քաշըմ, վերը թյազանան տաշըմ՝ պիրկցնըմ իլած ծնգըլ-մնգըլ ծենն էլ կտրցնըմ, մախլաս էնքան էտ խեղճ սա-

<sup>57</sup> *Տմբլաչի հաչան*, նշվ. աշխ., գ. Բ, էջ 25:

<sup>58</sup> Անդ:

<sup>59</sup> Անդ, էջ 27:

<sup>60</sup> Անդ, էջ 9:

<sup>61</sup> *Տմբլաչի հաչան*, նշվ. աշխ., գ. Բ, էջ 240:

զը խոխա, ըրխու ձեռք ա ընգալ, վեր քյուքը-  
հան ա իլալ, սիմերը ժինգոտալ, էլ ածվրմ չի»<sup>62</sup>։  
Հայոց «սազի» սիմերը ժանգոտվել են, պտու-  
տակները տեղաշարժվել, մասնագետ ձեռքի  
կարիք է զգացվում, այնինչ ազգը սրտացավ  
մեկի փոխարեն՝ հայտնվել է անտեղյակ կամ  
շահագրգիռ ձեռքերում։ «Ինգլիզում» կամենում  
են սազը լարել, րան չի ստացվում. յուղն է  
պակաս, էն էլ դեղին, կարագ յուղը, սրամտորեն  
նկատում է երգիծարանը և հեզմանքով ավե-  
լացնում, թե ով հանձն կառնի, որ «մյուստա-  
մյուսալլահ եր կենա մին ժանգոտած սազ քյոք  
անի էն էլ հյերին ձեռքը տա»<sup>63</sup>։ Ինչպես հայտնի  
է, Ան-Ստեֆանովի հաշտության համաձայնա-  
գիրը ոչ միայն գոհացում չտվեց արևմտահա-  
յոթյան քաղաքական ձգտումներին, այլև Անգ-  
լիայի «օժանդակությամբ» Բեռլինի վեհաժող-  
ովում ընդունվեց 61-րդ հոդվածը, որով բարե-  
նորոգումների իրականացման ոչ մի իրական  
երաշխիք չէր ստեղծվում։ Եվ քանի որ հայերի  
դրության րարելավման հարցը վեղցվում էր  
Ռուսաստանից (որն ավելի իրական էր) և  
տրվում էր եվրոպական վեց տերություններին՝  
Անգլիային, Ֆրանսիային, Գերմանիային, Ռու-  
սաստանին, Ավստրո-Հունգարիային և Իտալի-  
ային, դրանով իսկ արևմտահայերի հիմնախ-  
նդիրը դրվում էր խոշոր պետությունների հա-  
կասությունների ուղղորտում, որոնք էլ այն օգ-  
տագործում էին Թուրքիայի վրա ճնշում գործա-  
դրելու և նրանից օգուտներ քաղելու համար։  
Արդյունքում սուլթանը գիջումներով չեզոքաց-  
նում էր այդ տերություններին և ծրագրում  
Արևմտյան Հայաստանի զանգվածային ջարդե-  
րը։

Խաչանը «րարովակիր-մամակների», «ար-  
լավլենիների», «թլղրամների» միջոցով էն աշ-  
խարհի կյանքից տեղեկություններ է հայտնում,  
իսկ Կավրել դային րարկացած հոխորտում է,  
թե քեզ բերինք «տրախտըմը վեր ընգնի՞ս, թա  
կյաս ըստեղ էլ մաններտ աչուրուր տաս, ըստե-  
ղին անցվածքն էլ կիրիս, ըշխարքավը մին ա-  
նիս, կլխներիս օյին պերիս. սօբ պրատակիլ ըն

<sup>62</sup> Անդ, էջ 23:  
<sup>63</sup> Անդ, էջ 24:

չինալ, վեր քեզ դըրետ Ղարաբաղ տանիմ. դե,  
աչքերտ հոփ կալ, տեսնամ. ոա՛գ, դվա...»<sup>64</sup>։  
Մինչ Խաչանը րոպեական օգտապաշտական  
նկատառումներից ելնելով հապաղում է, թե մի  
գուցե նպատակահարմար չէ ետ գնալ, որ դժ-  
վար թե դրախտի ծրի ապրուստը մեկ այլ տեղ  
կարողանա ձեռք բերել, «Կափրել դային «տրի»  
ասից մին հանց թնթույալ էլ տիրավ՝ վեր ան-  
գուճնես թշթըշաց, աչքերս պեծին ըրավ»<sup>65</sup>։ Ես  
ապտակի վրա Տմբլաչի Խաչանը սթափվում է,  
աչքերը բացում, տեսնում, որ ինքը երազի մեջ  
էր գնացել «էն դյունյա» և շտապում է դեպի իր  
նվիրական Շուշվա-Ղալին «Թոփիյանան»։ Ու-  
րիշ էլ որտեղ այիտի հայտնվեր Տմբլաչի Խաչա-  
նը, ուրիշ էլ որտեղ կարող էր ունենալ այդպիսի  
տարաբնույթ ու տարասեռ լսարան, եթե ոչ  
«Թովիսանայում»։ Հենց այստեղից էլ, մեծ տե-  
րությունների դիվանագիտական խաղերից հոգ-  
նած, Տմբլաչի Խաչանը հեռագրեր է հղում՝  
«Լոնդոն, Չեմբերաքյանդին. - ամմա քեթըտ իր-  
զընանըմ ա հա՛ ա՛ ա՛...»<sup>66</sup>։ «Բեռլին. Բիսմար-  
կին. դինջ կա՛ց, ես քու հնգեր չըմ»<sup>67</sup>։ «Եվրոպու  
պալիսիկան» (Յանի թա ըշկի կապուկի տալը)  
ֆելիետոնի «1896 թվր հունիս ամսվա թլղրամ-  
ներից» տեղեկանում ենք, որ անգլիացի մար-  
կիզ Սոլսբերին որոշել է կոնսուլտացիա անել և  
Օսմանլվե մեջքի սապատը կտրել։ Լակայն  
Տմբլաչի Խաչանը մտրակիւմ է արևմտաեվրո-  
պական մեծ տերությունների միջամտության  
հետ կապված սին պատրանքները։ Գերմանա-  
ցի կանցյեր Բիսմարկից, անգլիացի քաղաքա-  
զետ Գլադստոնից, մարկիզ Սոլսբերից և այլ  
դիվանագետներից նա չի ակնկալում քաղաքա-  
կան առաքինության և ոչ մի դրսևորում։ Այդ են  
վեայում վերջիններիս հասցեներով առաքած  
հեռագրերը (թլղրամներ)։ Ահավասիկ, Թուրքիա-  
յի սապատը շտկիլու նպատակով մարկիզ Սոլս-  
բերիի նախաձեռնած «կոնսուլտացիայի» ար-  
դյունքները.

«ԻՏԱԼԻԱՆ օզըմ ա ետ կոնսուլտացին ինի,  
ամմա Լեմսին աչքը օնքին ա եշըմ։

<sup>64</sup> *Տմբլաչի Խաչան*, նշվ. աշխ., գ.Բ, էջ 30:  
<sup>65</sup> Անդ, էջ 31:  
<sup>66</sup> Անդ, էջ 105:  
<sup>67</sup> *Տմբլաչի Խաչան*, նշվ. աշխ., գ.Ա, էջ 66:

ԱՎՍՏՐԻԱՆ օգրմ ա կոնսուլտացի ինի, ամ-  
նա վեր առաջ ուրան գոգլան չի տյուս եկալ էտ  
պենը, չըմըխամի ա անըմ:

ԼԵՄԱԸ - հի՞նչ պեն օնիմ կարմունջըմը, վեր  
պտատվիմ յսփընջըմը ըսելսվ, ծեռքը լվանըմ  
ա դրադ կենըմ:

ՖՌԱՆԳԻՍՏԱՆԸ ասմա թա Ռուսեթը էտ պե-  
նըմը կխառնվի, ես էլ կխառնվիմ, թա չէ վեր գի-  
ղամ հազար մանեթ վիզիտի փող ա ընգնելու  
ճյանգըս, էլիա չըմ քիմալ:

ՌՌԻՍԵԹՆ էլ դյուզ դյուզինա օգրմ չի, վեր  
կոնսուլտացի ինի, չյուն վախըմ ա հյաքիմ  
սիաքենն դուզը տկոկըհան կտրել տան, Օսմա-  
նյուն հոքին տա, են վախտը ուրան 1877 թվի  
արյուն առնելու, պուլունկը կցնելի վիզիտի  
փողերը սառնին կորվի»<sup>68</sup>:

Խաչանի աչքից չէր կարող վիհպել այն  
հանգամաքը, որ Եվհուպայի մեծ տերություննե-  
րը Հայկական հարցը դարձնելով միջազգային  
դիվանագիտության առարկա՝ ծառայեցնում  
էին իրենց շահերին: Չնայած Անգլիայի կառա-  
վարող շրջանները նախապես հայտարարել էին  
սուլթանի ձեռքը չբռնելու դեպքում աշխարհով  
մեկ խայտառակվելու մասին, բայց կարգավի-  
րելով իրենց գործերը՝ Մերծավոր Արևելքում՝  
զանց առան Հայկական հարցը, ասելով թե ի-  
րենց նավատորմը չի կարող հաղթահարել Տավ-  
րոսի լեռները, ռոպեսգի պաշտպանի հայերին:

Գերմանիան, ձգտելով դառնալ Օսմանյան  
կայսրության մենիշխան տերը, մշտապես հա-  
մախոս էր սուլթանի հետ:

Ֆրանսիական կառավարությունը պաշտպա-  
նում է Թուրքիայի ամրողջա-կանությունը, ո-  
րովիետև մեծամեծ զուևարներ էր ներդրել այն-  
տեղ, չէր ուզում կորցնել դրանք:

Ամերիկայի Միացյալ Նահանգները հրաժար-  
վիմ էր գրադվել Հայկական հարցով՝ պատճա-  
ռաբանելով, որ իրենք չեն ստորագրել 1878թ.  
Բեռլինի կոնգրեսի պայմանագիրը և իրենց  
միջամտությամբ ավելի կվնասեն գործին:

Ցարական Ռուսաստանը գտնելով, որ արև-  
մտահայ ազատագրական շարժումներն իրենց

վարակիչ ազդեցությունը կունենան Անդրկով-  
կասում, համերաշխվում էր սուլթանի հետ.  
պաշտպանում նրա հակահայկական գործողու-  
թյունները:

Անդրադառնալով 1877-1878 թթ. ռուս-թուր-  
քական պատերազմի հետևանքներին Տմբլաչի  
խաչանը մերկացնում է Հայկական հարցի նկատ-  
մամբ ցարական Ռուսաստանի վարած քաղա-  
քականությունը: Մինչ ռուսների խոստումներից  
հուսահաբ՝ հայ ազատագրական ուժերի մի  
մասը, հետագա արյունահեղությունները կան-  
խելու նպատակով, գերադասում է թուրքերի  
հետ բանակցելու և հպատակվելու ուղին, մյուս  
մասը մերժում է քաղաքական այդ գիծը: Ինչ-  
պես տեղեկանում ենք «դրամաֆոնի էլիա թա-  
փուր, էլիա կամեղիա» գրույցից, թուրքերին  
հպատակվելու քաղաքական գիծը Տնգլբազ  
խաչանի սրտով չէ: Նա, իհարկե, իրախուսում է  
կովեասյան ժողովուրդների բարեկամությունը  
և քննադատության է ենթարկում ցարական մա-  
մուլը՝ երկոամասում բնակվող ազգերի հարա-  
բերություններում գծտություն սերմանելու հա-  
մար, սակայն առևտրի կանոններով առաջնորդ-  
վիլ պարբերականներին, բարեկամության և  
եղբայրության հիմնի լրագրային կարգախոս-  
ներին՝ Մելիք-Շահնազարյանը հակադրում է  
հասարակական համակեցության կնճռոտ հար-  
ցերը, Շուշիի հայտնի կոտորածները. «Էտ էլ են  
չտեռնա, վեր փետրվարին են կուտորվածքին  
վախտը, հայ կնանեքն ու ըխճըկեքը թափուր  
տյուս եկած քաչալ համշարոց կլիին բալկոն-  
ներան ծաղեգ շաղ տան, ծափ տան ու կեցցե՛  
կանչին: Բոլա՛ հինչքան աբուռնես չուր ընկավ,  
Ասժու սերին մեր իաչն ու խաչվառին պատիվի  
վենատակ մեք տալ...»<sup>69</sup>: Խաչանին մտահո-  
գում են նաև հայ-վրացական հարաբերություն-  
ները: Այդ է վկայում տիլիփոնի հեռագիրը. «Խա-  
թարալայի իմրագրին - Թա կարիս լոթիանա  
Թիֆլիզու դոչերին ու դոչ կովցնողներին չիքիլն  
էլ կզեթըմտ տյուս պիրիս, աֆֆարիմ կասիմ,  
ամմա հանց ըրա տմակենն պեց չինի, համութ  
ա...»<sup>70</sup>:

<sup>68</sup> *Տմբլաչի խաչան*, նշվ. աշխ., գ. Բ, էջ 58:

<sup>69</sup> *Տմբլաչի խաչան*, նշվ. աշխ., գ. Բ, էջ 220:

<sup>70</sup> Անդ, էջ 233:

Հատկանշական է, որ դեռևս XVIII դարում՝ մելիքական պայքարի վերջին շրջանում, թեև Ղարարադի մելիքները ոռոսական արքունիքի կողմից գրավոր փաստերով ճանաչվում էին իրեն իսկական տերեր և պետք էր հավատալ, թե նրանք առաջնակարգ նշանակություն կստանային այն ժամանակ, երբ Ղարարադն անցներ ռուսաց տիրապետության տակ, բայց ինչպես Լեոն է դժգոհությամբ արձանագրում, ստացվեց ըուլորովին հակառակը. «Հայերը արդեն ոռոս տիրապետության ամենաջերմեռանդ կողմնակիցներն էին և նրանց չէր, որ ռուսաց կառավարությունը պիտի սիրաշահեր անարյուն նվաճում կատարելու համար, այլ թուրքերին, որոնք իսկապես երկրի կառավարող տարրն էին ներկայացնում»<sup>71</sup>: Ցարական Ռուսաստանի այս անփառունակ խաղերն, իհարկե, անհնալ է առանց հեզմանքի աչքի անցկացնել, որոնք ի հակակշիռ տարատափուկ միտումի՝ առատորեն սնում են խաչանի քաղաքական սատիրորան. «Ղորթ ա Ռուսենն Կավկազը ըոնելան ետը էտ կյուլերին քեթը առ ժամանակ հըղաղվից. չյուն սյառթ շներ սյուս եկին, վեչխարներին մղայիթ կացին, ամմա վերչերս մին ղուլալ էտ շները քնավ ընցին յա քոնու տիրին ուրանց, վեր կյուլերը հինչ օգին անին, մին ղուլան մեր չորանենն շներին ումուղավը արխային ուրանց փորըներին հայընը կացին ու էն վախտը օյամիշ իլին, հիր վեր կյուլին ճտերը մըծմըծանալով՝ ուրանց խայաթը պընըցրին, ոյուղաըը քցած՝ անտեր անտիղական վեչխարներին երա տվին, փորտոտեցին, ղըընղարան քցեցին»<sup>72</sup>:

1905թ. ոռուսական առաջին հեղափոխությունը փոքր ժողովուրդների սրտում ծնում է հավասարության և ազատության մեծ հույսեր: Լիշնան-ձմոհան ամիսներին հեղափոխական շարժումը Ռուսաստանում հասնում է իր բարձրակետին, և արքունիքը միջոցներ է ուղղում ժողովուրդի ուժերը մասնատելու համար<sup>73</sup>: Նիկոլայ

II-ը հոկտեմբերի 17-ին մանիֆեստ է հրապարակում, որն ազդարարում է «քաղաքական ազատությունների անխախտ հիմունքներ» և խոստանում օրենսդիր Դումայի հրավիրում: Բայց շուտով ռեակցիան արյան մեջ խեղդում է ազատագրական մեծ շարժումը, և ինքնակալության լուծը ավելի է ծանրանում փոքր ազգերի վրա: «Հայոց դուման-երկու քյալմա խոսք» ֆելիետոնից իմանում ենք, որ Խաչանն իր Ձուռնա-Տմուլան թողած՝ ղըլըցոց հետ հեռախոսով է խոսում, որպեսզի «սյասը եր չինի» և ինքն էլ իր սիրելի «խարանի» հետ անախորժությունների մեջ չընկնի<sup>74</sup>: Հոկտեմբերի 17-ի մանիֆեստն առիթ դարձավ, որ ցարիզմն իր դիվային ուժերը նորից գործի դնի՝ բողոքելու հայ-աղբբեջանական ընդհարումներ: Բախումներ եղան նաև Շուշիում: Մահմեդական հետամնաց հոգևորականության հեղինակությունն անվերապահորեն ընդունող խաժամուժը հեշտությամբ էր ենթարկվում հայերի վրա հարձակվելու կրչերին. «էտ մանիֆեստին տական օյինրագությունն շատ տյուս եկրն, յոյուրուկըատ դային մեր կըոքենն յավ հմրելան ետը, ղազախներին ան թուրքերին մեր ջանին ըրավ... սաղ Կավկազը ուրուրոցավ ընգավ, ըրնավ, ըրտըսունքավ շղաղվից ու չրու սօր էտ շնըհաչուցը, էտ արյուն ըրտասունքը կտրվըմ չի, վըչանըմ չի»<sup>75</sup>:

Հայերի համար կյանքի ապահովություն գոյություն չունի: Ղըամաֆոնի «Մեր ցավերան» ֆելիետոնից իմանում ենք, որ Շուշին շրջափակման մեջ է, «չյուն տյուս եկողը յա վեննավ ծեռքավ ա կորչըմ, յա ճնըպարին պլովվըմ, յաըլամիշ ինըմ, յա չէ սպանվըմ ու եսիր ընգըմ

կանգ էին առնում զինվորների առաջ և նրանց ձեռքերը սեղմում էին. սրանք էլ ծիծաղելով ընդունում էին այդ եղբայրական ողջույնները: Ու՛մ մտքով կանցներ այդ րուպեին, որ երկու օրից հետո նույն զինվորները կրակելու էին այդ անգեն ամբոխի վրա... Հայերը անցան բավական կանոնավոր քայլերով և «Մեր եայրենիք» երգելով: Իմ սիրաը ուրախությունից թրթոաց, երբ լսեցի երգը: Արդյոք մի օր կտեսնե՞մ մեր հայրենիքի իսկական գորքերը, մեր եայրենիքը ազատ երկիր դարձած...» (Մ. Թումանյան, նշվ. աշխ., էջ 217-219):

<sup>74</sup> Անդ, էջ 223:

<sup>75</sup> Անդ, էջ 225:

<sup>71</sup> *Լեո*, Պատմություն Ղարաբադի եայոց թեմական հոգևոր դպրոցի, Թիֆլիս, 1914, էջ 73-74:

<sup>72</sup> *Տմբուլայի խաչան*, նշվ. աշխ., գ.Բ, էջ 210 - 211:

<sup>73</sup> «Հեղափոխականներն ու նրանց համակրողները կանոնավոր շարքերով անցնում էին փողոցներով... Շատերը

մեր քիրվաներին, վեր քանե հարուր տարի կողք կողքի ըպրելավ, կյողութունա, մարթասպանութունա զատ՝ մեզ մին օրիշ մարիֆատ չի նշանց տվալ»<sup>76</sup>:

Շուշիում ոստիկանությունը, հասարակական կարգ ու կանոնի պահապանները սերտորեն համագործակցում են մարդասպանների, գողերի ու ավազակների հետ. «Ձուռնիս փչըմ ըմ, Շոշվա-Ղլան մին խբար ա կյամ, թա ընդեղի յասաղուլնեն յա յասաղուլբաշիքը հանց սայաղ ըմ, վեր չրու սօր գիղըմ չըն թա հշտեղ ըմ կորալ թոփխանըմը մին մարթու չորս գյուլլա ուտըց-նող չորչափռաստ փախչողնեն»<sup>77</sup>:

Տմբլաչի հաչանի քաղաքական երգիծանքը ուղեկցվում է խոր դրամատիզմով՝ իբրև հետևանք այն ռանի, որ թուրքական մուլեռանդությունը հայերի համար ստեղծում է ստրկական վրձակ: Բացահայտելով հայ ժողովրդի պատմական ճակատագրի ամբողջ ողբերգությունը՝ նա քաղաքական ազատության մեջ է տեսնում վերկության միակ ելքը: Տմբլաչի հաչանը ակտիվ պայքարի կողմնակից է: Նբա համոզմամբ, հայը պետք է և՛ տնտեսապես, և՛ քաղաքականապես սթափ ու պատրաստ լինի՝ դիմագրավելու «ըրսըհան հիլի, տկըհան ծիլի» հակառակորդին, որը հարմար առիթ է սպասում «վեր մին օր վեննիտ աակը քանդի, քեզ վերին մեչին բաթմիշ անի, հային մեռունած օջաղը կյուլու ճտերավ լցնվրն...»<sup>78</sup>:

Ո՞րն է Տմբլաչի հաչանի առաջարկը, դեպի ու՞ր է մղում նա իր «աչքի լյուս դարաբադցոց».  
«Ամմա բոլ ա՛, հայը բեդմա մին հետան գիդա, թա հյուր միետ կործ օնի... Աստվածանա էն ա խնթրվածքս, վեր միեգսատենը մեբ չորաննեն սայաղ կենան, վեչխարներան շները անպակաս անին, վեր վախտ բեյվախտ կյուլերին եկած վախտը՝ երա տան, բինոցան մոտ չթողին: Հու անգուծ օնի, թող լյավ լսի»<sup>79</sup>: Ինքնըստիմքյան պարզ է անհրաժեշտ քաղաքական եզրակացությունը և զարմանալիորեն այժմեական:

<sup>76</sup> *Տմբլաչի հաչան*, նշվ. աշխ., գ.Բ, էջ 215:

<sup>77</sup> *Տմբլաչի հաչան*, նշվ. աշխ., գ.Ա, էջ 188:

<sup>78</sup> *Տմբլաչի հաչան*, նշվ. աշխ., գ.Բ, էջ 211-212:

<sup>79</sup> Անդ, էջ 211-212:

Երգիծաբանը ծաղկում է սուլթանական Թուրքիայի կողմից մեր ժողովրդի արևմտահայ հատվածի նկատմամբ ծրագրավորված կամայականությունները, ճնշումն ու բռնությունը: Այս շրջանում գբողի մեծագույն ծառայությունը ժողովրդի հանդեպ պիտի համարել այն, որ նա դեպքերի, իրադարձությունների ճշմարտացի պատկերմամբ սթափեցնում է ժամանակի հասարակական միտքը: Գիշտ ըմբռնելով, որ արևմտահայերի ազատագրման հարցը չի կարելի կապել ոչ ազգային ջոջերի գործունեության, ոչ էլ արևմտաեվրոպական դիվանագիտության հետ՝ քրիստոնեական հուամանիզմի քարուզիչ Տնգբազ հաչանը, ցավք, հանգում է հասարակագիտական առումով տկար եզրակացության: Կորցնելով իրականության ռեալ զգացողությունը՝ նա որոշ ֆելիետոններում ճակատագրի անհրաժեշտությունն է վերագրում մեր ժողովրդի արևմտահայ հատվածին բաժին հասած դժբախտությունը. «Հինչ վեղը տա կլխին հայր, ընդրա անտիրական ճըկատին սև օր ա կորված, սև օրավ էլ պեդմա չրու վերչը քինա»<sup>80</sup>: Որբերը, գաղթականները, կոտորածից փրկվածները «Իրանի և Ռուսեթի» սահմաններն են լցվել, «Ճյուրը հարամ, հացը հարամ, մստել եր կենալը հարամ, ապրելը հարամ հու հարամ»<sup>81</sup>: Երանի թե «Էսքան կուտուրվածքից» հետո մի աստվածասեր դուրս գար և հայի աչքի արտասուքը սրրեր<sup>82</sup>: Եռանդով արտահայտելով ճնշված ժողովրդի բողոքն ու դժգոհությունը՝ քաղաքական ու սոցիալական կարևոր խնդիրների արծարծման ժամանակ ջրի երես է ելնում Տմբլաչի հաչանի երգիծանքի մորդարական պահպանողական ռարոյախոսությունը:

Խաչանը ծաղրում է վերնախավը «նյանամ-սյանամ խանըմներին», որոնք աղքատներին ողորմություն տալուց մի քանի օր առաջ թերթում «պուբլիկացի ըն անըմ», որ ծանոթ-անծանոթ իմանան իրենց գործունեության մասին, ողպեսզի և՛ «պարեկործություն անողների թիվը շատանա և՛ ողորմություն ուզողների (ըտրանց

<sup>80</sup> *Տմբլաչի հաչան*, նշվ. աշխ., գ. Բ, էջ 47:

<sup>81</sup> Անդ, էջ 46:

<sup>82</sup> Անդ:

թիվ ու համբարք չի կա)»<sup>83</sup>: Մի կողմից խաչանը սպանիչ ծաղրի է ենթարկում իրենց ազգային գործիչներ հորջորջող, ցոփ ու շվայտ կյանքի սիրահար կեղծ «պարեկործներին» ու նրանց կանանց մուլորությունները, մյուս կողմից գերագնահատելով բարեգործական նպաստամատույց հիմնարկությունների ազգափրկիչ դերը՝ օգնություն է հայցում այդ նույն հարուստներից. «Թա էտ տանջվող անտեր, անտիրական մարթոց հոգսը հո՛ւ պետմա քաշի, հո՛ւ պետմա սովածին հաց տա, ծարավեն ճյուր, չալըմ մնըցածին օթևան, էտ էլ թող մեր հազարնե իարջող, դաչաներըմ քեֆ արամիչ անող, պորտընեն եղըկալած հայերն ասին»<sup>84</sup>:

Տմբլաչի խաչանի արդար գայըույթը ուղղված է բոլոր սուտ բարեգործների, կնիծ ազգասերների, ժողովրդի անունից շաղակրատող երեսփոխանների, ծույլ ու անգործունյա նիրհող-հնամուկների դեմ: Նա ծաղրում է վերնախավը քաղքենիների «ազգային գործիչներ» երևալու սնապարծությունը և որոշում է ազգասերների սակագինը ընկնելու դեպքում զինվորագրվել նրանց ռանակին. «Մզանըմ թանգ ա ըզգասեր տեռնալը. ասըմ ըն միեգ Ղալըմը իծծունա իվել ըզգասեր կա, տակցին վեր իծընանա, ես էլ ըմ ըզգասեր տոնալու, հի՛նչ կինի կիկի, իչեր տվող Աստված»<sup>85</sup>:

«Աշխարքիս պեները թրսըպարան ա, - ասում է Տմբլաչի խաչանը. մեկի առողջական վրճակից բողոքներ չունենալով՝ «սաղ ջանավ» հանգստյան տներում թրև է գալիս ու անիմաստ ծախսում կուտակած հազարները, մյուսը դեղի համար մի քոռ կոպեկ չունի և սև մահի ռաժին է դառնում<sup>86</sup>: Ահա թե ինչ է պատմում խաչանը այդպիսի մի հարզված բարեգործի կծոխության մասին. ասում են, որ շատ բարեհոգի է, ծնողագուրկների, աղքատների նկատմամբ այնքան է հոգատար, որ քիչ է մնում նրանց մսից էլ կտրի, իր մսի վրա դնի, որ հանկարծ չնիհարի<sup>87</sup>:

Բարեգործությամբ «աշխարհի թարսությունները» շտկելու Կ.Աելիք-Շահնազարյանի ուտոպիան խարսխվում է նորոգարական հրապարակախոսության այն գաղափարական ուղենիշի վրա, թե հարստությունն ամենագոր է, և որ միմիայն այդ հարստությունը կարող է փրկել մարդկանց սոցիալական թշվառությունից: Ընկնելով Լուսնթագի վրա՝ Տմբլաչի խաչանը հայտնարերում է մի իդեալական հասարակարգ. որի մասին գրողի երազանքը ձևավորվում է շահագործման և սոցիալական անարդարությունների նկատմամբ դժգոհության հողի վրա՝ պատմական զարգացման վերջնական շարժիչ ուժ համարելով կոոնական և բարոյական գաղափարների հերթափոխումը: Նրա երազած թոփխանան բոլորովրն էլ նման չէ Ղարարաղի հայտնի «Թոփխանային»: Այստեղ ոչ գողություն, դատ ու դատաստան կա, ոչ հողի, կաքի, ունեցվածքի կոփվ, ոչ էլ «թուզըթաթախ կործեր»: Տղամարդ ու կին անխոս անծպտուն, առանց սակարկուլու առևտուր են անում՝ «վեչ նիսյա կա, վեչ դավթար»<sup>88</sup>: Այնուհետև խաչանը այցելում է Լուսնթագի կլուբները՝ «վեչ կարտի ստոլ տեսի, վեչ լոտոյի»: Ձուգահեռներ անցկացնելով Շուշիի իրական «Թոփխանայի» հետ, խաչանը դիշում է, թե ինչպես թղթախաղի, լոտոյի սեղանների շուրջը գիշերներ անցկացրած մեծահարուստները երազի մեջ անգամ տուզ, պիկ, կարոլ են գոռում և քնած երեխաներին «սյարսամիչ անրմ». «Ընդեղին կլուբներին խոսք ու գրուցը ուրանց օրվա ղյարդերն ա, ուրանց շհարին պակասություննեն ղյուզմիչ անելի մոլըհաթը, քյասիթ քյուսուբու շահելը, մին մինու խելք, շնորք, գիղություն սվրոցնելը»<sup>89</sup>:

Ի պատիվ Կ.Աելիք-Շահնազարյանի՝ պետք է ասել, որ հետագայում նրան հաջողվել է շրջանցել «Նոր-Դարի» պահպանողական մտայնությունը: Բավական է նշել, որ դրախտից «Ուհան պելուն» հասցեագրած նամակում Տմբլաչի խաչանը իր պարսավանքն է ուղղում ոչ միայն «Մուրճի», «Մշակի» նեղ թայֆայական

<sup>83</sup> Անդ, էջ 49:

<sup>84</sup> Անդ, էջ 87:

<sup>85</sup> *Տմբլաչի խաչան*, նշվ. աշխ. գ.Ա, էջ 73:

<sup>86</sup> *Տմբլաչի խաչան*, նշվ. աշխ., գ.Բ, էջ 86:

<sup>87</sup> Անդ, էջ 85:

<sup>88</sup> Անդ, էջ 27:

<sup>89</sup> Անդ, էջ 28:

հակառակությամբ, այլև հարազատ «Նոր-Դարին», որի սեփական թղթակիցն էր ըսքը. «Ընդեղ վեչ ծակ Նոր դարական տեպի, վեչ ճղճղ Մշակական... յա Մուրճական», որ ամբողջ տարին միմյանց հայիոյելով մեկի շինածը մյուսը քանդի, «մինին դյուզ խոսքը էն մինը ժռր, սևը սիպտըկցնի, սիպտակը սևըցնի...»<sup>90</sup>: 1905թ. սեպտեմբերին գրած «Մեր ըշխարքին խաբարներան» ֆելիետոնում Տմբլաչի Խաչանի «քվիթ տղա» Ղափալ Պուղուսը (որին Տմբլաչի Խաչանը հետագայում «րախշեիշ է անում», այսինքն նվիրում է Ջուռնա-Տմբլան) դարասկզբի պարբերականների առատության մասին տեղեկացնում է. «Հունց վեր տեսնըմ ըք, տարին ավադ ա, կազեթու բոլլուլ կինի, տա Աստված, վեր կթըցողու էլ բոլլուղ ինի ու կազեթնն մյուստա մյուսալլահ ծեռքածեռք չընգնին, շտարար տեղան»<sup>91</sup>:

Տմբլաչի Խաչանը ոչնչացնող ծաղրի է ենթարկում լիբերալ մամուլի արատավոր բարքերը, երգիծանքի ուժով ընդգծում, թե որքան անտանելի են դարձել սնամեջ վաստերի հեղեղը, սուտը, ժողովրդի խոսքի անտեսումը: «Տնգլբազի» առաջին համարում, շնորհավորելով «Մշակի» տասնվեցամյա «ծնունդն ու մկրտությունը», Խաչանը երգիծում է լրագրի «հայիոյախոս» լեզուն. «ուշունց տալու փողրաթում, խեր չկա», - ասում է նա, - աշտարակեցիք ու շուշեցիք «մեչին բարաթաթ» չեն թողել. «թահ օրիշ վեշակ ա գիղըմ, էն պընըցնի»<sup>92</sup>: Ի դեպ մամուլի տարբեր օրգանների կողմից փոխադարձ վիրավորանքն ու անհանդուրժողականությունը սահման չի ճանաչում. «Ես էլ կըկարիմ կազեթ տյուս առոն. սաղ տարին ուշունց տամ, ուշունց լսիմ, տարվա վերջին էլ հաղայ ասամ՝ ազկին մշակն ըմ, փող տվաք ուշունց տամ, տալ չըք դյահի ըթար բիարուռ նամոն... Է՛հ, պելի, հի՞նչ ասիմ, այամը փիսացալ ա,

մհենգ հունց վեր ասըմ ըս. փողին սյասը տմբլիս ծենան շատ գու ա...»<sup>93</sup>:

Կ.Մելիք-Շահնազարյանը հանդես է եկել անդրկովկասյան շուրջ քսան թերթերում, ամսագրերում և հանդեսներում («Նոր-Դար», «Աղբյուր», «Տաբազ», «Մշակ», «Խաթաբալա», «Ժամանակ», «Սուրհանդակ», «Մաճկալ», «Ղարաբաղ», «Գրական թերթ» և այլն): Գրողի հասարակական-քաղաքական տրամադրությունները իրենց արտահայտությունն են գտել հատկապես «Նոր-Դար» պարբերականում և «Աղբյուր» ամսագրում: Վերոհիշյալ թերթերին ու հանդեսներին գանազան ծածկանուններով աշխատակցել են նաև Միրզա Տեր-Սարգսյանը (Միտ-Սար), Գրիգոր Նեբսիսյանը, Լևոն Աթաբեկյանը, Սիմոն Առաքելյանը, Աստվածատուր Երիցյանը, Աշոտ Աթանասյանը (Սալ-Սան), Տմբլաչի Խաչանի եղբայրը գյուղագիր Սողոմոն Մելիք-Շահնազարյանը և ուրիշներ:

Չավազանցություն չի լինի, և ոչ էլ ժամանակակիցների ստեղծած գրական արժեքների թերազնահատություն, եթե ասենք, որ Կոնստանդին Մելիք-Շահնազարյանի քաղաքական և սոցիալական սարկազմը XIX դարի երկրորդ կեսի արևելահայ երգիծանքի համապատկերում իրեն համաթեք մի այլ մեծություն չի ճանաչում: 1901թ. ապրիլի 8-ին Փարիզից Աելիք-Շահնազարյանին հղած նամակում «Ժամանակի» խմբագրապետ-տնօրեն Սիմոն Հախումյանը արժեքավորելով գրողի քանքարը, միաժամանակ խնդրում է խմբագրություն ուղարկել «հայ ժողովիդական, մանավանդ գալառական կյանքի վերաբերյալ զույցներ, որոնց կյանք ներշնչելու գործում հայ գրականության մեջ Դուք ուսուցիչ եք նորագույն գրողների»<sup>94</sup>:

Իթրև օավառի գրականություն հետաքրքիր է պարզել Տմբլաչի Խաչանի ստեղծագործության ակունքները. այսինքն ճշտել, թե ազգագրական շրջանի բանահյուսությունը որքանով է սնունդ տվել երգիծաբանի գրչին: «Ջուռնա-Տմբլա» Ա,Բ ժողովածուները զրված են դարա-

<sup>90</sup> Տմբլաչի Խաչան, նշվ. աշխ., էջ 28:

<sup>91</sup> Անդ, էջ 207:

<sup>92</sup> Տմբլաչի Խաչան, նշվ. աշխ., գ.Ա, էջ 130:

<sup>93</sup> Անդ, էջ 134:

<sup>94</sup> ՊԱԹ, Կ.Կ.Մելիք-Շահնազարյանի ֆ., գ.138:

րադյան հյուսիսը ու հատու ընթացակարգով (րացանությունը «Ղրամաֆոն 2»-ի №№ 1-4 ֆելիետոնների, որոնք շարադրված են գրական հայերենով), ժողովրդական կենսափորձն ու իմաստությունը արտահայտող ոճական դիպուկ ձևերով, թևավոր խոսքերով:

Գրքի «Երկու խոսքում» հեղինակը գլխավորապես մտահոգվում էր Ղարաբաղի լեզվի «որոշ դարձվածների, ընկիր ու ճոխ բառերի» արտաքին հանգամանքների պատճառով հետզհետե մոռացության տրվելու, աղավաղվելու, նախնական ոճից հեռանալու վտանգով:

Տմրլաչի հաջանի երգիծանքի ենարավորությունները ընդհանուր են: Նրա ասելիքը հրամցվում է առակի, առած-ասացվածքի, հանելուկի, դարձվածքի, հաճախ էլ հարցուփորձի ձևով:

«- Հի՞ր պեղմա Թիֆլիզի Հայոց թիատրը մին կարգին ընգնի:

- Հիր վեր օղտին հլաքուն տափին նի կյա»<sup>95</sup>:

Նրա շարադրանքին ընդհանուր է երազիկը և կրկնավոր բառերի գործածությունը, օրինակ՝ «ոյաստա-ոյաստա», «ջուռա-ջուռա», «դիմարդիմար», «ավլան-ավլան», «գիրթը-գիրիլ», «սաղսալամաթ», «քյասիր-քյուսուր», «ծիրտի-պիրտի» և այլն:

Տմրլաչի հաջանի խոսքն աչքի է ընկնում ընդհանուր ընթացակարգություններով, կախման կետերով, հարցադրումներով, խոսքի և դրության կոմիկականությամբ. «Ա՛խ պիժի վրժապետ, ախր խեղճիտ խեղճ շատ գոռ տամ է՛, գիղըմ չը՞ս ես էն աշխարքը չի...»<sup>96</sup>:

Ժողովրդական բառերում, դիպուկ արտահայտությունները, գլխավորապես սրախոսությունները նպաստում են ֆելիետոնների գաղափարական հագեցվածությանը: Այսպես, օրինակ՝ «Իրսըհան հիլի. տկրհան ծիլի»<sup>97</sup>, «էն վաղե կյուշը, էն վաղե փրթուշը»<sup>98</sup>, «Աշխարքս տմակ, ուրանք տենակ»<sup>99</sup>, «Դրսչ պեն օնիմ կարմուն-

ջըմը, վեր պտատվիմ յափընջըմը»<sup>100</sup>, «Թանընգած մոկնը»<sup>101</sup>, «Տիյեր աստուծ, տվեր տու»<sup>102</sup>, «Ճյուրը կակուղ»<sup>103</sup>, «Ա կոժ, քեզ ասիմ, ա կուլա տու լսի»<sup>104</sup>, «Լև եզնը վեր վերընգնի, տնըկավերը կըշըտանա»<sup>105</sup> և այլն:

Երբեմն երգիծարանի խոսքը խճուղվում է օտար, գրարարյան բառերի և արտահայտությունների ժանրաբեռնումից («Որ ունիցի ալկանջըս լսելու, լուիցե»<sup>106</sup>, «Ձոր ինչ փրթեսցես և գայն կերիցես»<sup>107</sup>, «Մեսմիս, բատոնո, մեսմիս»<sup>108</sup> և այլն), հանգամանք, որ ժամանակին նկատել է Լեոն<sup>109</sup>:

Տմրլաչի հաջանը վարպետորեն է օգտագործում ընդհանուր հարստությունները, ժողովրդական իմաստությունները և Ղարաբաղյան համոզիչ ու կենդանի կոլորիտ ստեղծում: Համ ու հուռով են գրված Կ.Սելիք-Շահնազարյանի ֆելիետոնները, որոնց նյութը հեղինակը վերցնում է ժողովրդի կյանքի ակունքներից, նրա ներաշխարհը դարձնում իր ստեղծագործությունների թեման, ընաշխարհի մարդկանց ընդհանրություններն արտահայտում նրանց իսկ խոսքի միջոցներով: Տմրլաչի հաջանը նույնպիսի հմտությամբ է օգտվում Ղարաբաղի բարբառից, ինչպես Պարոնյանն ու Օտյանը արևմտահայերենից, Սայաթ-Նովան ու Աունդուկյանը՝ թիֆլիսահայ բարբառից:

Ժողովրդական բառերում լայնորեն օգտագործված, գուսանական հորինվածքների տպավորությունը Տմրլաչի հաջանի ստեղծագործությանը իրավացիորեն հաղորդել են բանասիրական ընկալություն և հանդիսացել այդ երկերի ժողովրդականության և գեղարվեստական ամրոջականության գործոն: Արցախ ազգագրական շրջանի ժողովրդական խոսքը լինելով

<sup>95</sup> Տմրլաչի հաջան, նշվ. աշխ., գ.Ա, էջ 204:

<sup>96</sup> Անդ, էջ 29:

<sup>97</sup> Տմրլաչի հաջան, նշվ. աշխ., գ.Բ, էջ 211:

<sup>98</sup> Տմրլաչի հաջան, նշվ. աշխ., գ.Ա, էջ 61:

<sup>99</sup> Տմրլաչի հաջան, նշվ. աշխ., գ.Բ, էջ 89:

<sup>100</sup> Անդ, էջ 113:

<sup>101</sup> Անդ:

<sup>102</sup> Անդ, էջ 92:

<sup>103</sup> Անդ, էջ 169:

<sup>104</sup> Անդ, էջ 141:

<sup>105</sup> Անդ, էջ 130:

<sup>106</sup> Անդ, էջ 66:

<sup>107</sup> Անդ, էջ 130:

<sup>108</sup> Անդ, էջ 166:

<sup>109</sup> ԳԱԹ, Կ.Կ.Սելիք-Շահնազարյանի ֆ., գ.119:

նպատակասլաց ու գունագեղ՝ սի կողմից նպաստել է բանահյուսական ստեղծագործությունների տարածմանը, որի փաստացի հորինողները հաճախ անհայտ են մնացել, մյուս կողմից հիմք է հանդիսացել անեկդոտի ժանրի զարգացման համար, որի ծաղկումը կապվում է հայտնի գվարճախոս Պըլ Պուղու անվան հետ: Պատահական չէ. որ սնվելով ժողովրդական ակունքներից, Տմբլաչի Խաչանի ֆելիետոնների մեծ մասը ևս անեկդոտային (անգամ հանելուկային) բնույթ ունեն, հիմնականում գերծ են շատախոսությունից, որովհետև դիպուկ խոսքի մեջ առավել ցայտունորեն է դրսևորվում ասելիքի հանուր ամբողջությունը: Ֆելիետոնները երկնելով այդ սկզբունքով՝ հեղինակը որոնում է բարբառային նյութի մատուցման որոշակի ձև (գուռնա, տմբլա, բարովակիր, թլղրամ, դրամաֆոն, տիլիփոն, աբլավլենի), որտեղ ժողովրդական նվագողի խոսքի առանձնահատկությունները արտահայտում են ժողովրդի լեզվամտածողության և բնավորության էական գծերը: Իր արտահայտած գարլափառներին հետամուտ Կ. Մելիք-Շահնազարյանը գուռնա և տմբլա խորհրդանիշների միջոցով միաժամանակ նպաստում է ազգագրական և բանահյուսական ավանդույթների հարատևությանը: Հատկանշական է Խաչանի, նրա գուռնայի և տմբլայի շուրջը ստեղծված բանահյուսությունը, որը ռացատրվում է Խաչանի աշխարհընկալման կերպի նկատմամբ Արցախ պատմաազգագրական շրջանում իշխող գործուն հետաքրքրությամբ: Ի դեպ երգիծական պատումներում ժողովուրդը հաճախ Տմբլաչի Խաչանի զրուցընկեր է ընտրում Արցախում շատ սիրված գվարճախոս Պըլ Պուղուն: Այսպես, ըստ Բերդաշենում (Մարտունու շրջան) գրառված գվարճապատման, Պուղին դիմում է Խաչանին՝ գուռնան փոխվերցնելու խնդրանքով.

« - Խաչան, տիյեր աստուծ, տըվեր տու, սօը ուրուգուն գուռնատ փոխ տո ինծ:

Խաչանը կարծելով, թե Պուղին ուզում է նվագել սովորել, հարցնում է.

- Պուղին ապրած կենա, հանցա օզըմ ըս ածել սըվտրի՞ս:

- Չէ, չէ, չէ, ես քե մատաղ. օզըմ ըմ թաք մին քըշեր անջուկըս դինջ քոն ինիմ»:

Մեկ այլ պատումում, մի օր «ղըլըցեք» հավաքվում են, թե՛ «Պըլ Պուղը, տու ինիս էն աստուծը, էտ տեփը ճղած դվալին» խելքի բեր. գիշեր-ցերեկ «Թոփխանայում» նրա գուռնատմբլայի ձենն ա լսվում, ոչ քուն ունենք. ոչ դադար: Պուղին խոստանում է բողոքավորների հանգիստն ապահովել, մինչդեռ Խաչանը, Պուղու հանդիմանանքին, թե՛ հերիք չէ՝ մարդկանց զահլեն տանես, պատասխանում է. «Հինչա, գուռնաս փչըլական չըմ, թա քու էշըտ խրտնում ա՞»:

Ամբողջ գվարճապատումը կառուցված է Խաչանի սրամտության նկատմամբ «ուրըցոցոց» պատկառանքի վրա, ում որակիւմ են որպես «տեփը ճղած դվալալ»: Ուշադրության է արժանի ժողովրդական բանահյուսության մեջ Խաչանին տրված այս բնորոշումը, որն իր մեջ ներառում է համով-հոտով, հումորով աշխույժ նվագողի կերպարը, ում համար ճշմարիտ խոսքից բարձր չկա ոչինչ: Եթե հաշվի առնենք այն հանգամաքը, որ գուռնան հիմնականում բացօթյա հանդեսների ժամանակ օգտագործվող սուր, ճչացաող ձայնով նվագարան է, ապա տեսանելի կլինի «տեփը ճրած» (տմբլայի երեսը պատռած) բնորոշման աղերսները ռարրառային մեկ այլ «փրվերան», փարդից վեր (քողը պատռած) աղտահայտության հետ, որոնք իմաստով ընդհանրանում են «ոելսը ճոթած» գոեհկաբանության հետ և նշանակում են չափավորության ոտնահարում, իսկ Խաչանի պարագայում նաև՝ անկաշկանդ խոսքի դրսևորում: Եվ քանի որ, ուժերների անզուսպ բռնության դեմ ուրվված ճշմարիտ խոսքը ենթադրում է հասարակական պայքարի շիկացած մթնոլորտ, բնականաբար, այն ոմանց պատճառում է խորին գոհունակություն, ոմանց էլ համապատասխան րժկամություն: Ուստի եթե առաջինների

\* Խաչանի և Պուղու մասին պատմող երկու գվարճախոսությունները գրի է առել տողերիս հեղինակը, 1989թ. Բերդաշենում: Պատմել է Արտաշ Միրզաջանյանը:

համար հաջանը հասարակական կյանքում տեղի ունեցող երևույթների մունետիկ է ու ազդարար, ապա վերջիններիս համար անցանկալի լուրերի տարածող է, ինչու չէ նաև բամբառակ: Իսկ հաջանի համար կարևորը ժողովրդի գոհունակությունն է: Արցախում լայն տարածում ստացած այս և նման զվարճապատումները հաջանի խոսքի ներգործուն ուժի վառ վկայությունն են: Դրանք մեր օրերում իսկ կենցաղավարում են շնորհիվ բովանդակության արդիականության:

Ջուռնա-Տմրլան հանդիպում է նաև Ղարաբաղի այլաբանական ու բանաձևալին բանահյուսության նմուշներում: Այսպես՝ «Մեզ մինն օնինք, կխուսըցնինք կխոսի, ամա վեր մորթինք, արյուն չի կյալ» (Ջուռնա), «Ըլաճկանը վեր ուրան կամքին թողիս, զուռնաչուն էլ կը քինա» կամ «Ամեն պոետ Ասատի չի լինել, ամեն տմրլաչի՝ հաջան»<sup>110</sup>: Վերջինը ակնհայտորեն հաջանի շուրջը ստեղծված բանահյուսական նմուշ է:

Տմրլաչի հաջանը արդարության քարոզիչ է, նվագածու, ոտքի վրա սուր խոսք հորինող, հանգավոր ու անհանգ ասույթներ ստեղծող: Նրա բնատուր խառնվածքը երգիծանքն է, հորինած տողի համնուհոռը: Ուշագրավ է, որ Ատեփանակերտի կենտրոնական շուկայում հաճախ կարելի էր հանդիպել դավալ Ամրդի դայուն, ով անցող-դարձողներին հավատացնում էր, որ ինքը հասարակ գործիքով չի նվագում, այլ Տմրլաչի հաջանի զուռնայով: Իր կենդանության օրոք տեսնելով, որ Տմրլաչի հաջանը բանահյուսական բնավորություն է ձեռք բերում, Կ.Մելիք-Շահնազարյանը գրում է «Տմրլաչի հաջանին Պարիժ քինալը» երեք գործողությամբ կոմեդիան (45 թերթ)<sup>111</sup>: Պահպանվել է նաև նույնանուն վերնագրով, բարրառով գրված չափածո մի շարք<sup>112</sup>, որոնցից «Հուռունի ողբը հաջանին ճանապարհի դնելուց», «հաջանի քույրը՝ Հուռուն», հատված-

ները երգվել են բեմադրության ընթացքում: Վերջին հատվածը ցայսօր կենցաղավարում է Արցախում, կատարվում է ընտանեկան տոնախմբություններում և մշակույթի տան համույթների համերգներում՝ աննշան խմբագրմամբ: Ահավասիկ, «հաջանի քույրը՝ Հուռուն» հատվածի բնագիրը.

*Ախժի Հուռուն թող յացըղ,  
Էսա կը կյա հաջանը,  
Բոլ-բոլ փողեր կբերի  
Ջուրն ու քիսան լըցըրած,  
Օափ տո, պար եկ, քեփ ըրա,  
Բոլա հինչքան լաց իլիր,  
հաջան, հաջան կնչելավ,  
Հինչը՞ս բայդուշ կտըրալ,  
Տոն ու տեղտ մուռացալ:  
Աստված էրզան ումբըր տա  
Պարիժ քեցող հայերին,  
Մեր ապուն էլ դվաթ տա  
Դռըցնի տմրլին*<sup>113</sup>:

Հետագայում Հովհաննես Մկրտչյանը, վերոհիշյալ պիեսը հարմարեցնելով իր ժամանակի պահանջներին, բեմադրել է «Տմրլաչի հաջան» երաժշտական կոմեդիան: Բաքվի Շահումյանի անվան մշակույթի տան հայկական ժողովրդական թատրոնի կոլեկտիվը մեծ հաջողությամբ հյուրախաղերով հանդես է եկել Լեռնային Ղարաբաղում՝ Մարտակերտի, Հաղրութի և Մարտունու շրջկենտրոններում, Չայլու, Թալիշ, Զաղին տակ, Մեծ Թաղլար, Ազոխ, Առաքյուլ, Աոս, ճարտար և այլ գյուղերում: «Իրենց լավ խաղով հանդիսականների սիրուն, համակրանքին և ջերմ ծափերին արժանացան սիրող արտիստներ Պետրոս Վարդանյանը, Յուրի Պողոսյանը, Նեդա Ավագյանը, Մարգո Հակոբյանը, Գրիշա Պետրոսյանը, Ջենֆիրա Լալագարյանը, Կարո Ղաղայանը և ուրիշներ»<sup>114</sup>: Արժանին մատուցե-

<sup>110</sup> ԳԱԹ, Կ.Կ.Մելիք-Շահնազարյանի ֆ., գգ. 95, 97:

<sup>111</sup> ԳԱԹ, Կ.Կ.Մելիք-Շահնազարյանի ֆ., գ. 7:

<sup>112</sup> Անդ, գ. 51:

<sup>113</sup> Անդ, գ. 51:

<sup>114</sup> «Գրական Աղբյուրներ», 1966, № 5, սեպտեմբեր-հոկտեմբեր, էջ 112: (1990 թ. տողերիս հեղինակը, արցախյան շարժման ոգուն համապատասխան՝ Տմրլաչի հաջանի պիեսը (Կ.Կ.Մելիք-Շահնազարյանի ֆ., գ. 7, 51) հագեցնելով «Ջուռնա-Տմրլաչ» Ա,Բ ժողովածուների ֆելիետոններով և համապատասխան արխիվային նյութերով, այն հանձնել է Արցախի Վ. Փափազյանի անվան պետական դրամատիկոս-

յով սիրված դերասանուհի Թամարա Դեմուրյանին՝ պետք է ասել, որ ռազում հայկական ռեժիսորից նա հնչեցնում էր Տմրլաչի ռաջանսի «Դըլըցե կնանոց պընը-փեշակը», Մարյան Բաջու «Օթելլոյի» մեկնությունը և էլի ուրիշ երգիծապատումներ՝ ժողովրդի հիշողության մեջ միշտ վառ պահելով Արցախ ազգագրական շրջանի ռառուրանը:

1913թ. մայիսի 19-ին, Բաքուում նախաձեռնելով երգիծարանական պատկերազարդ «Ձուռնա» շարաթաթերթի լույս ընծայումը, հրատարակիչ Սմրատ Գաղազաշը Կ.Սելիք-Շահնազարյանին խնդրում է իր թղթակցություններով համդես զալ շաբաթաթերթի էջերում: Խնդրանքին կցած Գյոզալ Աղրաջու սրտառուչ նամակը ևս վկայում է Տմրլաչի խաչանի ֆելիետոնների կարևորությունը. «Ազիզ խեալաֆ ախպերացու խաչան ջան: Գյոզալ Աղրաջին մատաղ ինի խելունը ճակատիտ, արուըշիմի պես մազերիթ, շումշատ մատիրիտ: Խաչան ջան, աս վարսիս սիպտազած վախսիմ ուզում ամ հայոց ազգի խաթըն մին գուռնաչիթուն անամ, համնա գուռնան անամ տընրլի լեազաթ չունի, խնթըն աղաչըն ամ հինչպես քի աս պարովակիրս ստացաը, տմրլիթ մին կոլիի ծիանը համի, որ շուտ «Ձուռնի» մեչին ախպանը: Ազանամ սիմդ կոփեցիր, արքայութուն քինալիս քեզ ալ հետնաս տանիլու ամ»<sup>116</sup>:

Հայ գրողների կովկասյան ընկերությունը, ըստ արժանվույն գնահատելով Կ.Սելիք-Շահնազարյանի գրական վաստակը, 1913թ. նրան ընդունում է ընկերության անդամ: Այդ կապակցությամբ ընկերության նախագահ, մեծանուն ռանաստեղծ Հովհ.Թումանյանը հետևյալ նամակն է հղում նրան. «Մեծաըգո Կոնստանդին Սելիք-Շահնազարյան: Վաըջությունս սըանով հայտնում է Ձեզ, որ ընկերությանս ընդհանուր

ժողովը, համաձայն իր կանոնադրության 4-րդ հոդվածի, գաղտնի քվեարկությամբ ընտրեց Ձեզ ընկերության անդամ»<sup>116</sup>:

20-ական թվականներին մերկացնելով ծախս ֆուտուրիստների դիրքորոշման գաղափարական և գեղարվեստական սնանկությունը Կ.Սելիք-Շահնազարյանը մատնացույց է անում նրանց պոեզիայի առանցքը թովանդակագուրկ անսովորը: Այս առումով ընդոշ են «Ֆուտուրիստի մրմունջը» (գլխին գոռեց, կազմակերպեց. տառերը շարեց Տմրլաչի խաչանը), «Գուրգեն Մահարիի կոչը Մուսային» (ամեն տողի համար հարյուր ոտրլի) և «Իմ կոչը Մուսային» (նվեր Գուրգեն Մահարիին) ոտանավորները.

*Եվ դու Մուսա  
Լավ բան ասա  
Թե չես ասիլ  
Կասեն փիսա,  
Ես կհանեն քո ուղեղը  
Աղբ կղնեն նրա տեղը...  
Ես երազում  
Երեք խնձոր  
Երկնքիցը ընկած տեսա.  
Մեկը հոտած  
Մյուսը թզկած,  
Իսկ երրորդի  
Մեջը որդնած:  
Դու ինձ տվիր ու գնացիր  
Ես նայեցի ու շատ լացի  
Լացի աջի ցի  
Քո գլխովը տվեցի*<sup>117</sup>:

Կ.Սելիք-Շահնազարյանի ստեղծագործական ուղին համընկնում է կյանքում և գրականության մեջ կատարվող խոր փոփոխություններին, գրական նոր հոսանքների առաջացմանը: Նոր ժամանակների խնդրումներն արտացոլելով իր ֆելիետոնների մեջ՝ աշխարհ տեսած գրողն, այնուամենայնիվ, կարողանում է հեռու մնալ աղմկալից նորամուծություններից:

Կ.Սելիք-Շահնազարյանի ստեղծագործությունը կարևորվում է նկարագրվող դեպքերի, իրադարձությունների՝ մեր ժամանակների հետ

կան թառորնի գեղարվեստական խորհրդի դասին: Հավանության արժանացած «Տմրլաչի խաչան» հինգ գործողությամբ երաժշտական կատակերգության ռեմադրությամբ ձեռնամուխ է եղել ՀՀ արվեստի վաստակավոր գործիչ Արտաշես Գյամջյանը: Սակայն քաղաքական անբարենսլաստ զարգացումների պատճառով այիեսը չի բեմադրվել-Թ.Հ.):

<sup>115</sup> ԳԱԹ, Կ.Կ.Սելիք-Շահնազարյանի ֆ., գ. 127:

<sup>116</sup> ԱՆՊ, գ. 201:

<sup>117</sup> ԳԱԹ, Կ.Կ.Սելիք-Շահնազարյանի ֆ., գ. 48:

ունեցած աղերսներով: Ցավոք, մենք չենք կարող հեղինակի թագում էջեր վկայակոչել որպես անցյալ կատարյալ, որովհետև ներկա քաղաքական գարգացումների պայմաններում Հայկական հարցը մոլորված է կրկնվող անցյալի

ուլորաններում: Բայց եթե հարափոխ ժամանակների համակցության մեջ Կ.Սելիք-Շահնագարյանի երգիծանքը իր գաղափարականությամբ շարունակում է մնալ կենսունակ, նշանակում է հեղինակը խորապես գիտակցել է իր կատարած գործի լրջությունն ու կարևորությունը: